Ազգ

AZG
armenian newspaper

Յունիս 26, 1991
Հարեւշաբթի
Եռօրեայ թերթ
Ա տարի, թիւ 38
գինը 30 կ.

հասցէ՝ Երեւան 375010
Դանիելեանների 47
հեռախօս՝ 581841
Ֆաքս՝ 562941
տելեքս՝ 243267 SULA SU

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ... ԳՐԱԴԱՐԱՆ

Բաքվի հեռուստատեսությունը հիստերիա է բարձրացնում

Մարտունի. Հունիսի 24-ին Խոջավենդ է մտել 3 ավտոբուս օմոնականներով: Նրանք դիմել են երջանի պարեսին, խնդրելով աջակցել իրենց երջանում անձնագրային ռեժիմի ստուգում անցկացնելու նպատակով: Պարեսատունը մերժել է այդ խնդրանքը: Ըստ հավաստի լուրերի, Մարտունու երջանի արեւելյան մասում օմոնականների կուտակումներ են տեղի ունենում:

Մարդակերտ. Երեկ երեկոյան զնդակոծվել է Մարտակերտի երջանին սահմանամերձ Ումուդլու ադրբեջանական գյուղը: Պետք է ենթադրել, որ ադրբեջանցիները կեղծ կրակոցներ են արձակում իրավիճակը աղաւակայունացնելու նպատակով:

Բաքու. Տեղական հեռուստատեսության բոլոր ծրագրերով սկսվել է հիստերիա Ստեփանակերտի օդակայանում օմոնականների կողմից բռնագրավված Արցախի դպրոցականների համար նախատեսված հասունության ատեստատների եւ 9-ամյա կրթության վկայականների շուրջը: Մեկնաբանությունները բողնելով իրենց խղճին, հարցնում ենք. մի՞թե արցախցի դպրոցականին պետք է մնա առանց ավարտական վկայականի, լրացված... ընդամենը մայրենի լեզվով: ■

Ներքին խաղաղականության հարցերի քննարկումն ավարտվեց նախագահական պաշտոնի ստեղծմամբ

Երկուշաբթի, 24 հունիսի ցերեկային նիստը սկսվեց վարչապետ Վազգեն Մանուկյանի ելույթով, որը վերջին շրջանում կառավարության նկատմամբ ուղղված հարձակումների կապակցությամբ խորհրդարանից պահանջեց իրեն եւ իր գլխավորած կառավարությանը վստահության քվե տալ: Նախագահ Տեր-Պետրոսյանը հիշեցրեց, թե վստահության քվեի հարցը չի կարող քննարկվել առանց կառավարության հաշվետվության: Նույն օրն իսկ հարցը հանվեց քննարկումից սահմանադրական նման կետ չլինելու պատճառով: Վարչապետի անսպասելի հայտարարությունը լարվածություն առաջացրեց խորհրդարանում:

Առաջարկներ եղան նախագահական պաշտոն ստեղծելու վերաբերյալ: ՀՀՇՇ եւ ԱԻՄը պաշտպանեցին դա: ՀՀԴն այդ պաշտոնի ստեղծումը պայմանավորում էր սահմանադիր ժողովի եւ նոր սահմանադրության ստեղծմամբ: Հանրապետական խմբի կողմից Է. Եզորյանն ափսոսանք հայտնեց, որ սեպտեմբերի 21-ի հանրաքվեն փոխանակ միավորման գործոն լինելու, ճիշտ հակառակը եղավ: Որոշակի ուժեր հարվածում են իշխանություններին եւ հանրաքվեին պարզապես իշխանության տիրանալու նպատակով, ասաց նա:

Երեկ, հունիսի 25-ին, Գերագույն խորհուրդը շարունակեց աշխատանքը: Ելույթ ունեցավ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը, որն ասաց, թե առկա պետական կառուցվածքները չեն համապատասխանում հայ ժողովրդի ազգային, տնտեսական եւ սոցիալական պահանջներին: Եթե փոփոխություններ չարվեն, խորհրդարանը փաստորեն դավաճանած կլինի հայ ժողովրդին: Եթե ինքը չկարողանա խորհրդարանին համոզել փոփոխությունների անհրաժեշտությունը, շարունակեց նախագահը, ապա կդիմի ժողովրդին:

Ի դեպ, Տեր-Պետրոսյանը նախորդ օրվա նիստում կուսակցությունների ներկայացուցիչներին, պատգամավորական խմբերին եւ ֆրակցիաներին հրավիրել էր աջանցին կեսժամյա խոսակցությունների: Ներկայացել էին Կոմկուսը եւ Դաշնակցությունը: Այդ ընթացքում շինիչ ոչ մի առաջարկություն չի եղել, դրանք լոկ բարոյախոսական բարոզներ էին, ասաց նախագահը: Այնուհետեւ նա առաջարկեց նախագահական պաշտոն ստեղծել, որպես ստեղծված դրությունից դուրս գալու միակ ելք, քանի որ մինչ այդ, Գերագույն խորհրդի նախագահությանը լիազորություններով օժտելու հարցը չէր ընդունվել:

Հարցը դրվեց քվեարկության եւ 154 կողմ, 8 դեմ եւ 11 ձեռնպահ ձայնով անցավ: Այնուհետեւ քվեարկությամբ որոշվեց նախագահական ընտրությունները անցկացնել 1991 թ. հոկտեմբերի 16-ին:

Երեկոյան նիստում վարչապետը դարձյալ վստահության քվե պահանջեց: Սակայն կրկին ընդծվեց, որ դա կանոնակարգին չի համապատասխանում: Ընդունվեց նաեւ նրան անվստահություն հայտնելու հարցադրումը: Հակառակ դրան, խորհրդարանը չնայալ հայտարարեց 1990թ. նոյեմբերի 30-ի վարչապետին լրացուցիչ լիազորություններ տալու վերաբերյալ որոշումը: ■

Կնքվեց հայ-ամերիկյան պայմանագիր

«Անկախությանը դուք արժանի եք եւ, անկախ ամեն ինչից, մեր բարեկամությունը պետք է շարունակվի»

Հունիսի 24-ին այն ստորագրեցին Հայաստանի նախարարների խորհրդի նախագահ Վ. Մանուկյանը եւ ԱՄՆ-ի Յուտա նահանգի նահանգապետ Նորման Բենչերտերը: Այնուհետեւ, Հրազդան հյուրանոցի մեծ սրահում լրագրողների համար տրվեց մամլո ասուլիս, որին մասնակցում էին Հայաստանի վարչապետը, փոխվարչապետ Ռ. Չիմբալարյանը, շինարարության եւ արտաքին գործերի նախարարները, ամերիկյան կողմից՝ նահանգապետ Ն. Բենչերտերը, պատվիրակության ղեկավար, խոշոր ձեռնարկատեր «Հանքսման Քեմիքլ Քորպորեյշն»ի պրեզիդենտ Ջոն Հանքսմանը, Միացյալ Նահանգների սենատորներ Ջեյֆ Գարնին եւ Օրրին Հաչին, կոնգրեսական Ուեյն Օուենսը եւ քաղաքական այլ գործիչներ, որոնք Հայաստան էին ժամանել հունիսի 22-ին:

Դեռ առավոտյան, հյուրերը մասնակցել էին համատեղ ուժերով կառուցվող «Հանքսման-Հայաստան» երկաթբետոնե կառուցվածքների գործարանի բացմանը եւ Հարավ-Արեւմտյան քաղամասի հրաղարակներից մեկում կորպորացիային պատկանող համալիրի ապագա մասնաճեղքի հիմքում խորհրդանշական հուշաղարկուզի տեղադրման արարողությանը: Ինչպես իր ներածական խոսքում նշեց վարչապետ Մանուկյանը. *«Անչափ հատկանշական է եւ պատվաբեր այն փաստը, որ Հայաստանն իր առաջին միջազգային պայմանագիրը կնքում է ԱՄՆ-ի հետ, քանզի տարիներ շարունակ, գտնվելով ստրկության մեջ, հայերիս համար ԱՄՆ-ն եղել է ազատության դրոշակակիր: Եւ հիմա մեր ժողովուրդը դուրս է եկել ազատության ճանապարհ, ուր ԱՄՆ-ի անցած ուղին ուղեցույց է մեզ համար: Իմ կարծիքով հաղթակերպության եւ տնտեսության զարգացման համար ամենակարեւոր դրվագները բարոյականությունը, ազնվությունն ու աստվածավախությունն են: Այդ ամենը մենք տեսնում ենք Յուտա նահանգի ժողովրդի մոտ»:*

Շարունակելով վարչապետ Մանուկյանի միտքը, նահանգապետ Բենչերտերը նշեց ստորագրվող պայմանագրի կարեւորությունը եւ այդ հարցում Հանքսմանի եւ նրա ընտանիքի հսկայական ներդրումը:

Մամլո ասուլիսի մասնակիցները հայտարարեցին նաեւ, որ բացի արվեստի եւ մշակույթի ասպարեզից, կհամագործակցեն նաեւ առեւտրի բնագավառում: Այդ առիթով նշվեց հատկապես պղնձի արտադրության նշանակությունը, որի մեծ պաշարներ ունի Հայաստանը, իսկ Յուտա նահանգում կան պղնձի վերամշակման խոշոր կենտրոններ:

Ջոն Հանքսմանը անդրադառնալով Հայաստանում կատարվող փոփոխություններին, հիշեցրեց, որ դրանք հսկայական են: *«Անկախությանը դուք արժանի եք,- ասաց նա,- եւ մենք կաղոթենք, որպեսզի ձեր գործը հաջողությամբ պսակվի: Սակայն, անկախ ամեն ինչից, թե ինչ կլինի, մեր բարեկամությունը պետք է շարունակվի»:* Այն հարցին, թե ինչպես է ԱՄՆ-ի կոնգրեսը վերաբերում անկախության գնացող հանրապետություններին, կոնգրեսական Ու. Օուենսը պատասխանեց, որ իրենք շատ էին պաշտպանում Մերձբալթյան հանրապետությունների անջատումը: Ինչ վերաբերում է մյուս հանրապետություններին, ժողովրդի տեղեկություններ չունեն: Կոնգրեսականը հույս հայտնեց, որ Հայաստանը կառանձնանա օրենքով եւ երբ դա իրականություն դառնա, կոնգրեսը կխրախուսի ազատ Հայաստանը: Այդ է վկայում նաեւ վերջերս կոնգրեսի կողմից ընդունված այն բանաձեւը, որը դատապարտում է հայերի դեմ կենտրոնի կողմից տարվող քաղաքականությունը, մարդու իրավունքների ոտնահարումը: Մամլո ասուլիսից հետո հյուրերի համար տրվեց հրաժեշտի ճաշկերույթ: Հայ ժողովրդի անունից վարչապետ Մանուկյանը շնորհակալություն հայտնելով ամերիկացիների մարդասիրական վերաբերմունքի համար, հույս հայտնեց, որ կնքված պայմանագիրը կօգնի երկու ժողովուրդների բարեկամությանը եւ փոխշահավետ ծրագրերի իրականացմանը:

Գոռ ՍՍՍՏՊՅՍՆ

Մոլդովայի անկախության մասին հանրաքվեն կանցկացվի աշնանը

«Մոլդովայում առաջին հանրաքվեն կանցկացվի աշնանը եւ նվիրված կլինի հանրապետության անկախության հարցին», - հայտարարեց «Ասախի» ժաղովական թերթին տված հարցազրույցում Մոլդովայի պրեզիդենտ Միրչա Սնեգուրը:

«Մեր կողմից անցկացվող քաղաքականության մեջ,- նշեց նա,- մենք հիմա ենք ընդունում այն, որ Մոլդովան երբեք ԽՍՀՄ կազմի մեջ մտնելու իր համաձայնությունը չի տվել եւ չի ստորագրել այսօր վերանայվող 1922 թ. պայմանագիրը»: Ըստ պրեզիդենտի, Մոլդովան մտցվել է ԽՍՀՄ կազմի մեջ Մոլոտով - Ռիբենտրոպ պակտի կնքման հետեւանքով, ոչ թե ժողովրդի ցանկությամբ:

«Իրականությունն այն է, որ Մոլդովայի տնտեսությունը կազմված է մյուս հանրապետությունների հետ: Մենք կձգտենք պահպանել կապը ամեն մի հանրապետության, եւ հավանաբար Միության հետ, եթե «9+1» բանաձեւը պահպանվի»,- ասաց Մոլդովայի պրեզիդենտը:

Պրեզիդենտի կարծիքով, Պրիդնեստրովիեի եւ Գագաուզիայի անջատողական ղեկավարներն աջակցություն են ստանում Կենտրոնից: *«Չեմ ցանկանում ասել, որ Գորբաչովն է իրենց աջակցում,- նշեց Միրչա Սնեգուրը: Սակայն կան ուրիշ ուժեր. «Միություն» պատգամավորական խումբը, որը ոգեշնչում է նրանց չզիջել»:*

«Իհարկե, անհրաժեշտ է անցկացնել ճկուն քաղաքականություն: Սնշուշ, որոշ դեպքերում դեկավարությունը պետք է լինի ավելի վճռական, իսկ մյուս դեպքերում ավելի լոյալ: Սակայն, եթե ընդունենք, որ Կենտրոնը կժանաչի Պրիդնեստրովյան հանրապետությունը,- հայտարարեց Միրչա Սնեգուրը,- ապա դրանով նա կբացահայտի իր իսկական դեմքը եւ պարզ կդառնա, որ այսպես կոչված Պրիդնեստրովյան եւ Գագաուզյան հանրապետություններն այն ուժերի արարվածքներն են, որոնք նպատակադրվել են ստիպել մեզ ստորագրել Միութենական պայմանագիրը»: ■

20.000 լիբանանցի զինյալներ մաս են կազմելու բանակին

Վերջերս ինքնալուծման ենթարկված լիբանանյան գլխավոր 7 կազմակերպությունների զինյալ խմբավորումները, որոնց մարտիկների ընդհանուր թիվը հասնում է 50 հազարի, մեծ դժվարությունների առաջ են կանգնեցրել երկրի իշխանություններին: Նրանք «հարատացրել» են երկրի աշխատավորների կազմում 30 տոկոսի հասնող անգործների բազմությունը:

Ըստ նախնական պայմանավորվածության, իշխանություններն պարտավորվում են ամսական 100 դոլար «վարձ» տալ այդ զինյալներին, ինչը կազմում է նախապես նրանց ստացածի ստորջ կեսը: Իբրեւ այդ լուծում, իշխանությունները պատրաստվում են նրանցից 20 հազարին ընդգրկել բանակի եւ ոստիկանության կազմում: Սա քաղաքացիների մեծ մասի մոտ այն տպավորությունն է հառաջացրել, թե երկրի 37 հազար մարդուց բաղկացած բանակի եւ 7000 ոստիկանության կազմում շուտով կհայտնվեն երկու տասնյակ հազար զոհեր, ավազակներ եւ մարդասպաններ: ■

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

Հնդկաստանի նոր վարչապետ Նարասիմհա Ռաոն պահանջեց թուլացնել երկրում գործող բազմազգ ձեռնարկությունների վրա դրված սեղմումները, հայտարարելով, որ իր կառավարությունը ծող բազմազգ ձեռնարկությունների առաջ դրված արգելքներ: Նա խոստացավ նաեւ թեթեւացնել Հնդկաստանի պետական-հանրային բազմանդամ սեկտորը:

Լեհաստանի նախագահ Լեխ Վալենսան սպառնաց ***լուծարել երկրի խորհրդարանը.*** քանի որ ըստ իրեն, պատգամավորները երկար քաշքշուկների առիթ են տալիս խորհրդարանի ընտրությունների մասին օրենքի նախագիծը քննարկելիս: Բացի այդ, նա խիստ դժգոհ է երկրում տնտեսական ռեֆորմների դանդաղ ընթացքից:

200 հազար ալբանացիներ, Հունաստանի քաղաքներում, շաբաթ օրը դիմավորեցին Մ. [illegible] հետ եւ ելույթ Նահանգների պետքարտուղար Ջեյմս Բեյքերին, որ նույն օրը հանդիպեց [illegible] ունեցավ խորհրդարանում:

Ջ. Բեյքերը, որի այցը առաջինն էր ամերիկյան որեւէ պաշտոնատարի կողմից այս երկրում, խոստացավ 6 միլիոն դոլարի օգնություն տալ Ալբանիային: Այդ օգնությունը բաղկացած կլինի սննդեղենից, բժշկական միջոցներից եւ... զրահից:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

Իսլամ Ֆունդամենտալիստները սպառնացին հարվածել Ռուսաստանի շահերին ամբողջ աշխարհում, որպես հակազդեցություն Ռուսաստանի զինվորական տիրությունների կողմից վերջերս հորդանանյան երկու քաղաքացիների դեմ արձակված մահավճռի:

Հարավսլավիայի վարչապետն զգուշացրեց հարեւանների եւ Սլովենիայի հանրապետություններին, որոնք այսօր խզվելու են ամբողջ [illegible] ից, որ այդպիսով [illegible] երկիրը միանգամայն են քաղաքական պատերազմի մեջ: Խոսելով Զագրեբում, վարչապետ [illegible] ասաց, որ [illegible] հանրապետությունները ոչ չկանգնեն իրենց որոշումից, երկրի [illegible] կվերանա:

Ֆիլիպինյան Պինատուբո հրաբուխը երկուշաբթի օրը [illegible] ժայթքումներ ունեցավ. [illegible] վերջալույսի մոխիր ու լավա թափելով շրջակա տարածության վրա:

Ամերիկյան գիտնականների համաձայն, Ռուսաստանի նավթահորերի հրդեհները ավելի փոքր վնաս կպատճառեն շրջակա միջավայրին եւ ընդհանրապես շրջանի կլիմային, քան նախատեսվում էր Ծոցի պատերազմի ընթացքում:

Գիտնականների այս հայտարարությունը առաջ քննադատության ենթարկվեց շրջակա միջավայրի մարդության հսկող միջազգային կազմակերպությունների կողմից: ■

digitised by A.R.A.R.@

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՐԶԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ ՄՏԱՀՈԳ Է

Հարցազրույց ՀՀ Նախարարաց խորհրդին առընթեր ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական կոմիտեի նախագահ Ռաֆայել ԹՈՌՈՅԱՆԻ հետ

Հուլիսի 1-ին Երեւանի «Արարատ» ֆուտբոլային թիմը մրցաշրջանի կմեկնի ԱՄՆ:

Պատվիրակության ղեկավարը հանրապետության սպորտկոմիտեի նախագահ Ռաֆայել Թորոյանն է, որը մտադիր է առիթն օգտագործել անչափ կարեւոր մի առաքելության համար: Հայաստանի մարզական նախարարը շատ ցանկացավ, որ այդ կողակցությամբ հարցազրույց տրագրվի հատկապես մեր թերթում:

Հենց նրա նախաձեռնությամբ էլ ծնվեց այս երկխոսությունը:

- Ի՞նչն է ձեզ ճուզում:

- Առաջին հերթին դպահոյանել այն նվաճումները, որ ձեռք ենք բերել մարզական բնագավառում: Գաղտնիք չէ, որ համաշխարհային չափանիշներով Հայաստանը մարզական առումով այսօր բարձր մակարդակ ունի եւ 161 երկրների թվում 14-րդ տեղում էր: Սակայն տնտեսական եւ ազգի համար բաղմական բարդ իրադրությունում, եթե այս ընթացքը կորցնենք, ապա կարող է փակուղու առջեւ կանգնենք:

Ազգը հոգեբանորեն պետք է պատրաստ լինի բարձրացնելու ֆիզիկական ընդհանուր ունակությունները: Միայն այդ դեպքում կարելի է հաջողություններ ակնկալել թե՛ տնտեսական եւ թե՛ ֆիզիկական կուլտուրայի բնագավառներում:

- Իսկ ի՞նչ է արվում այդ խնդիրները լուծելու համար:

- Կադրերի վերապատրաստման նոր ծրագրեր ենք մշակում, ներդրումներ անում:

Շուտով ֆիզկուլտուրայի մասին նոր օրենք կընդունվի, որի նախագիծը քննարկվել է Գերագույն խորհրդի համապատասխան հանձնաժողովում:

Հաստատվել է նոր կանոնադրություն, որով կառավարությունը մարզական բաղմականության համալիր ստրատեգիական ծրագիրը դրել է սպորտկոմիտեի վրա: Այսինքն այսուհետ համագործակցելու են լուսավորության նախարարությունը, ՀԱՄԽ-ի մարզական կազմակերպությունները, ԿՄԸ-ները, որոնք մինչեւ հիմա ինքնուրույն էին գործում: Մի խոսքով, գոյություն կունենա միայն մի մարմին, որը կղեկավարի մարզական կյանքը: Սա նոր կառուցվածք է:

- Սակայն այդ ամենի համար նյութատեխնիկական լավ բազա է պետք, անհրաժեշտ մարզակառույցներ:

- Դա մեր ամենացավոտ հարցն է: Առանց այն էլ աղքատիկ մարզաբազաներին ավելացավ երկրաշարժը, որը հիմնովին շարից դուրս բերեց Կումայրիի, Կիրովականի, Ստեփանավանի, Սպիտակի, այլ շրջանների մարզակառույցները: Այս իմաստով այսօր իրոք ողբերգական իրավիճակ է ստեղծվել:

Եթե 2-3 տարում չկարողանանք վերականգնել այդ մարզաբազաները, ուրեմն վերջնականապես կզրկվենք դրանցից:

Հանրապետությունում կառուցվում են տասնյակ հոգեբուժարաններ, վերականգնիչ կենտրոններ: Կառուցում են ամերիկացիները, գերմանացիները, անգլիացիները, նորվեգացիները, ֆրանսիացիները, Աշխարհի բժիշկները, Կարմիր խաչը: Ի՞նչ է տացվում, եթե դրանց փոխարեն մենք ունենանք 2 լավ մարզադաշտ, որտեղ հազարավոր երեխաներ իրենց մարզանները կարողանային անցկացնել, դա ավելի օգտակար կլիներ: Ես դա ասում եմ որպես մարզական ֆիզիոլոգիայի, մարզական բժշկության մասնագետ:

- Մարզաբազաները վերականգնելու համար ձեր կարծիքով ի՞նչ է պետք:

- Ես ունեմ մի առաքելություն, որի իրականացման համար շատ կփափագեի, որ ամբողջ ժողովուրդը սատար կանգներ:

Եթե եղած բազաները վերականգնենք, ապա 700 հազար երեխաներից կկարողանանք պարապմունքներին ընդգրկել գոնե կեսը, իսկ այսօր միայն 115 հազար երեխաներ մարզվելու հնարավորություններ ունեն: Դա շատ քիչ է:

Այդ կողակցությամբ ես մեկնում եմ ԱՄՆ եւ հույս ունեմ, որ մեր հայրենակիցները մեծ հասկացությամբ կմտնեն եւ իրենց նպաստը կբերեն այս անչափ կարեւոր խնդրի լուծմանը: Մենք սպորտի բարեգործական



- Ես բառյական իրավունք չունեմ տնտեսական այս ծանր իրավիճակում պահանջներ ներկայացնել հանրապետության կառավարությանը, որն առաջին հերթին մտահոգված է երկրաշարժից տուժածներին ու փախստականներին օգնելու, նրանց համար բնակարաններ կառուցելու դժվարին խնդրով: Իսկ ահա մեր հանրապետությունում եւ արտերկրում ապրող իմ բոլոր մյուս հարազատներին ու հայրենակիցներին ուզում եմ դիմել կոչով, որ սա պետք է հայրենիքի, բոլոր հայերի համար:

Վերջերս երբ հանդիպեցի մի քանի հոգեւորականների հետ, նրանք ասացին, թե Հայաստանի մարզական նախարարը համայն հայության մարզական նախարարն է: Ուստի այս տարի ուզում ենք կազմակերպել համահայկական թեթեւատելիտիկական խաղեր, հաշիվ ենք բացում:

- Իսկ ի՞նչքան գումար է պետք:

- Մեկ միլիոն դոլար: Այդ դեպքում մենք ամուրդով դա կփոխենք առնվազն 35 միլիոն ռուբլու եւ կլուծենք բոլորիս հուզող հարցը:

- Իսկ ինչու՞ այդ գումարները չեք պահանջում կառավարությունից, տեղի կազմակերպություններից, կոոպերատորներից, կամ պարզապես ունեւոր մարդկանցից:

- Ես բառյական իրավունք չունեմ տնտեսական այս ծանր իրավիճակում պահանջներ ներկայացնել հանրապետության կառավարությանը, որն առաջին հերթին մտահոգված է երկրաշարժից տուժածներին ու փախստականներին օգնելու, նրանց համար բնակարաններ կառուցելու դժվարին խնդրով: Իսկ ահա մեր հանրապետությունում եւ արտերկրում ապրող իմ բոլոր մյուս հարազատներին ու հայրենակիցներին ուզում եմ դիմել կոչով, որ սա պետք է հայրենիքի, բոլոր հայերի համար:

Վերջերս երբ հանդիպեցի մի քանի հոգեւորականների հետ, նրանք ասացին, թե Հայաստանի մարզական նախարարը համայն հայության մարզական նախարարն է: Ուստի այս տարի ուզում ենք կազմակերպել համահայկական թեթեւատելիտիկական խաղեր, իսկ 1992 թվականին Նավասարդյան խաղեր, որոնք ժամանակին անցկացրել են մեր նախահայրերը, հայրերը:

Գաղիք տարվա սեպտեմբերին տարբեր համայնքներից մենք հրավիրելու ենք մեր հայրենակիցներին:

Հեռացատկի աշխարհի փոխչեմպիոն Եւրոպայի ռեկորդակիր Ռոբերտ Էմմիյանն էլ մտադիր է հրավիրել ուժեղագույն հեռացատկորդներին:

Մենք պետք է ձգտենք հայկական բոլոր համայնքների հետ կապեր հաստատել եւ օգնել որոնցի մարզական կյանքը աշխուժանա: Ես կարող եմ հրավիրել տուր 300 երեխա եւ մեր հաշվին կազմակերպել մարզական ճամբարներ: Մենք կարող ենք տարբեր համայնքներ աշխատանքի ուղարկել քարձրորակ մարզիչներ:

Օլիմպիական հերթափոխի գիտերաթիկ դպրոցում ի վիճակի ենք ընդունել արտերկրների 30-40 երեխաների: Նույնիսկ մտածում ենք մոլորակի տարբեր ծայրերում եղած ուժեղագույն մարզիկներին ընդգրկել եռագույնի տակ, համահայկական մի թիմ ստեղծել, որպեսզի նրանք օլիմպիական խաղերում, կամ խոշոր մրցումներում պաշտպանեն Հայաստանի մարզական պատիվը:

Մենք նախատեսել ենք «Հրազդան» մարզադաշտի մոտ մարմարե հուշադաս կառուցել եւ անմահացնել ոչ միայն մեր օլիմպիական չեմպիոններին, այլեւ այն երախտավորներին, ովքեր իրենց ներդրումներով կօգնեն մեզ վերակառուցելու մարզաբազաները եւ կնպաստեն հայկական սպորտի վերելքին:

Զրույցավարը՝
Սուրեն ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԸ

ԽՈՍՔԸ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ՄԻ ՈՂՋ ՍԵՐՆԴԻ

Հազիվ երկու տարի է անցել այն ժամանակներից, երբ Հայաստանի տարբեր շրջաններում վերաբնակվեցին հարեւան հանրապետությունից բռնի տեղահանված մեր հայրենակիցները: Նոր տեսք ստացան շատ գյուղեր, վերանվանվեցին նրանց օտար անունները: Բռնագաղթվածների թիվը հասկանալի մեծ է Մասիսի շրջանում: Թողնելով նրանց բազմաթիվ հոգսերն ու դժվարությունները, խոսենք միայն մի խնդրի մասին, որը լուրջ մտահոգության տեղիք է տալիս: Այսօր մենք ականատես ենք լինում հարեւան հանրապետության կողմից տասնամյակներ շարունակ հետեւողականորեն կիրառվող ազգաձուլման քաղաքականության տխուր արդյունքներին: Հայոց լեզվի վատ իմացությունը մեծ դժվարությունների առջեւ է կանգնեցրել մատաղ սերնդին: Ռուսաց լեզվի դասավանդման սահմանափակումները ծանր դրության մեջ են դրել հատկապես միջին եւ բարձր դասարանների աշակերտներին: Լուրջ պրոբլեմի առջեւ են կանգնած շրջանի (եւ ոչ միայն Մասիսի) շատ գյուղեր: Անշուշտ, երկու կարծիք չի կարող լինել այն քաղաքականության ճշմարտացիության մասին, որ տանում են մեր իշխանությունները մատաղ սերնդի հայեցի դաստիարակության ուղղությամբ, բայց կարծում ենք, որ որոշակի ճկունություն ցուցաբերել է պետք այս հարցում: Զրույցը Անդրանիկավան գյուղի դպրոցի դիրեկտոր Զավեն Գաղասյանի, ուսուցիչների ու բնակիչների հետ, բերեց այն համոզման, որ գործը կարելի է շտկել, եթե միջին եւ բարձր դասարաններում ժամանակավորապես (1-2 տարով) չարգելվի դասավանդումը ռուսաց լեզվով, իսկ ցածր դասարաններում այդ պրոբլեմը չկա:

- Շատերը հեռանում են Ռուսաստան, իրենց հետ տանելով բազմաթիվ ընտանիքի եւ ընդունակ երեխաներ: Այսպես կարող ենք կորցնել այս սերունդին ես,- ցավով ասում է Զավեն Գաղասյանը:

Կարծում ենք, որ խնդիրը բավականին լուրջ է եւ նոր ուսումնական տարվա շեմին իշխանությունները աչքաթող չեն անի եւ ընդառաջ կգնան իրականության պահանջին: Չէ՞ որ խոսքը վերաբերվում է մի ողջ սերնդի:

Գեղամ ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Մասիս

ԱՐԲԱՆՅԱԿԱՅԻՆ ԿԱՊԸ ԿՅԱՆԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Նախատեսված է Հայաստանի եւ արեւմտյան կիսագնդի երկրների միջեւ հաստատել արբանյակային հեռուստակապ: Պայմանավորվածության համաձայն, մեր հանրապետության կապի նախարարության եւ Ամերիկայի Միացյալ Նահանգների «USS» ֆիրմայի համատեղ ուժերով այն պետք է գործարկվեր հայոց պետականության վերականգնման օրը՝ այս տարվա մայիսի 28-ին: Սակայն հետաձգվեց: Մեր թղթակիցը, այս եւ սրան առնչվող մի շարք հարցեր պարզաբանելու համար, հանդիպեց Հայաստանի կապի նախարարության փոխնախարար Ռոբերտ Հարությունյանի հետ:

ՀԱՐՑ. - **Պրն. Հարությունյան, ինչո՞ւ հետաձգվեց արբանյակային հեռախոսակապի գործարկումը:**

ՊԱՏԱՍԽԱՆ. - Տարբեր երկրների համագործակցությամբ կատարվող այս եւ նման շատ խնդիրները ժամանակին իրականացնելուն խանգարեց Ցոցի պատերազմը: Մեր նախարարության եւ «USS» ֆիրմայի համատեղ պայմանագրով կարող ենք գործարկման ժամկետը փոխադրել այս տարվա օգոստոսի 1-ից մինչեւ 15-ը:

Հ. - **Մինչեւ հիմա, ճարկով, կատարվել են նախապատրաստական-տեխնիկական աշխատանքներ:**

Պ. - Դում իրավացի եմ: Ավարտել ենք մոնտաժման եւ կարգաբերման աշխատանքների մեծող մասը: Ես նկատի ունեմ ընդունող կայանը, որ տեղավորել ենք Երեւանի միջքաղաքային հեռախոսակայանում: Առաջիկայում կտեղակայենք ընդունող անտենա նաեւ Ջրվեժի «Orpheus» կայանում: Դրամական արտահայտությամբ այս աշխատանքների վրա կծախսվի վեց միլիոն դոլար: Մոնտաժման եւ կարգաբերման խրթին գործընթացները կատարում են ֆիրմայի հոլանդական մասնաճյուղի մասնագետները, մյուսներ՝ մեր:

Հ. - **Ի՞նչ կարգով եւ ծավալով է գործելու կապը:**

Պ. - Հեռախոսային խոսակցությունները [illegible] արբանյակին, որ [illegible] ԱՄՆ: Ամենաառաջիկա փուլում կապը գործելու է 90 կանալներով եւ Հայաստանը կմիացվի ԱՄՆ-ի հետ: Երկրորդ փուլում կապը կգործի 120 կանալներով: Այս անգամ Հայաստանը կհաղորդակցվի եւ՝ ԱՄՆ-ի, եւ՝ Ֆրանսիայի հետ: Վերջինիս հետ մեր հանրապետությունը կկապվի Միացյալ Նահանգների միջնորդությամբ:

Հ. - **Արբանյակային կապի վերաբերյալ նախնական տեղեկությունը ոմանք ընկալեցին իբրեւ սպասարկման ոլորտի բարելավում: Ձեր պատկերացմամբ, ո՞րն է նոր կապի ստեղծման իմաստը:**

Պ. - Դա առնվազն անտեղյակություն է: Արբանյակային հեռախոսակապը գուցե այնքան կարեւոր չէ շատ երկրների համար, սակայն Հայաստանին հարկավոր է օդ ու ջրի պես: Այսօր մեր հանրապետությունը չունի ելք դեպի արտաքին աշխարհ: Հարեւան երկրների հետ մեր անորոշ, նաեւ բնամական հարաբերությունները խոչընդոտում են ելքը: Այս պարագայում նմանօրինակ կապը մեզ համար մի տեսակ դառնում է կյանքի ճանապարհ:

Մյուսը՝ այսօր տասնյակ համատեղ ձեռնարկություններ, օտարերկրյա հիմնարկներ եւ կազմակերպություններ կանոնավորապես չեն գործում միմիայն այն պատճառով, որ ժամանակին չեն ստանում ինֆորմացիա արտասահմանյան իրենց գործընկերներից: Այս գործում եւս մեծ դեր է խաղալու արբանյակային հեռախոսակապը:

Հ. - **Ձեր պատասխանից պարզվում է, որ արբանյակային կապը լինելու է նաեւ արտասահմանյան դրամ վաստակելու միջոց: Այնպես չէ՞:**

Պ. - Այո, այդպես է: Հանրապետության մի մասը հայտարարված է ազատ ձեռներեցության գոտի: Իսկ Արարատյան դաշտում մոտ ապագայում կառուցվելու է Եւրոդոլիս քաղաքը: Ասել է, թե՝ ակնկալվում է, որ երկու դեպքում Հայաստան կներթափանցի արտասահմանյան կապիտալը: Ակնթարթ է, որ Հայաստանի գործարաններ եւ արտասահմանյան ֆիրմաների աշխատանքային առօրյայում նույնպես զգացվելու է ժամանակակից կապի գործը: Ի դեպ, ձեռնարկություններին կտրվեն արտոնություններ օգտվելու արբանյակային հեռախոսակապից: Առանց չափազանցնելու աշխատողը հնարավորություն կունենա առանց ժամանակ կորցնելու իր հիմնարկից զանգահարել արտասահմանյան ֆիրմա:

Հ. - **Արտասահմանցի մասնագետներն այժմ այստեղ են, վաղը չեն լինի: Շահագործելու ընթացքում առաջ ծագելիք մասնագետները կարդարացնեն բաժանորդների հույսերը:**

Պ. - Անկասկած: Սա լոկ հաժոյախոսություն չէ: Նրանց աշխատանքից ու մասնագիտական իմացությունից գոհ են մնացել հոլանդացի գործընկերները: Որոնցի խորը տիրապետեն տեխնիկայի լեզվին, անշուշտ չեն սահմանափակվել Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտում ձեռք բերած գիտելիքներով: Համաձայնագրով նախատեսել ենք մի կետ, ըստ որի հնարավորություն ենք ստացել նրանցից վեցին վերապատրաստման ուղարկել «USS» ֆիրմայի հոլանդական մասնաճյուղ: Այս իրողությունը մի ավելորդ անգամ համոզում է, որ ժամանակն է ինժեներական մասնագետներին ուսուցանելու նպատակով համագործակցել զարգացած երկրների բուհերի եւ ֆիրմաների հետ: Դրան կարող է օգնել ուսանողների փոխադարձ փոխանակումը:

Հուսով ենք, որ Հայաստանի կառավարությունը, կապի նախարարությունը կօգտագործեն բոլոր հնարավորություններն արագորեն կյանքի կոչելու արբանյակային հեռախոսակապը:

Մ. ՂԱՋԱՐՅԱՆ

ՈՐ ԴՈՒՐ ԵՒ ՁԵՐ ԵՐԵԽԱՆԵՐԸ ԱՌՈՂՋ ԼԻՆԵՆ

Ինչպես անել, որ անկախ տարիքից, պահպանվի երիտասարդական աշխուժությունն ու շարժունությունը, որ, ըստ ցանկության, պակասի կամ ավելանա քաղը, որ կենսունակ չլինեն՝ պահպանվի մաշկի ողորկությունն ու դեմքի թարմ գույնը ... Զբաղվեմ գիտականորեն հիմնավորված բուժական Ֆիզկուլտուրայով: Այս հարցում ձեզ կարող է օգնել Մյասնիկյանի կահույքի ֆաբրիկայում ստեղծված առողջարարական կենտրոնի բուժական Ֆիզկուլտուրայի մասնագետ Սուսաննա Այվազյանը:

Սուսաննան տիրապետում է նաեւ կեցային մերսմանը, էքստրասենսային հատկություններ ունի, կարողանում է օստեոխոնդրոզ եւ այլ հիվանդություններ բուժել: Բայց հատկապես զբաղվում է դարի հիվանդություն դարձած, Երեւանում լայնորեն տարածված՝ կանանց անպտղաբերությունը բուժելով: Նա մշակել է ընդհանուր առողջարարական ֆոն [illegible] համապատասխան բուժական վարժությունների համակարգ: Մինչեւ վերջերս առողջարարական կենտրոնում գործող երկար ժամանակ երեխա չունեցող կանանց 7 հոգիանոց խմբի անդամներն իրենց ավելի առույգ ու լավ էին զգում, կորցրին ավելորդ քաղը, ամրապնդվեց առողջությունը, անգամ ավելի գեղեցկացել ու հմայիչ էին դարձել, իսկ 7-ից մեկը կարճ ժամանակ անց հղիացավ...

«Լրաբերի» հաղորդումներից մեկի ժամանակ Մարգարյանի ծննդաբերական հիվանդանոցի բժշկուհիներից մեկը նշեց, որ մեծ քանակությամբ երեխաներ արատավոր են ծնվում եւ դա կապված է մայրերի առողջական վիճակի հետ: *«Կարծում եմ, որ եթե բոլոր կանայք պարապեն բուժական Ֆիզկուլտուրայով եւ ընդհանրապես հետեւեն իրենց Ֆիզիկական վիճակին՝ ավելի առողջ երեխաներ կծնվեն,- ասում է Սուսաննա Այվազյանը:- Ես ուզում եմ, որ մարդիկ իմանան, որ այդպիսի կենտրոն կա, որ գա մեկը, որ պատրաստ է [illegible] ձեզ»:*

Ս. Ի.

digitised by A.R.A.R.@

«Լուրջ դիվանագիտության կարիք ունենք»

ասում է Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմի հոգեւոր առաջնորդ Տիրան եպիսկոպոս ԿՅՈՒՐԵՂՅԱՆԸ

1976 թվականից ի վեր հայ առաքելական եկեղեցու Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմի հոգեւոր առաջնորդն եք: Կարելի՞ է իմանալ, թե մինչ այդ, ինչպիսի ճանապարհ եք անցել...

- Ծնվել ու նախնական կրթությունը ստացել եմ Վիեդրոսի Նիկոսիա քաղաքում: Տասնչորս տարեկան եղած էր լրացել, ընտանիքիս հանդերձ մեկնեցինք Հայաստան: 1964-ին ընդունվեցի Էջմիածնի հոգեւոր ճեմարանը: Ավարտելուց հետո մեկ տարի էլ Ֆրանսիայում ուսանեցի, աղա վերադարձա հայրենիք եւ ձեռնադրվեցի կուսակրոն քահանա: Այնուհետեւ Վեհափառ հայրապետի կարգադրությամբ նշանակվեցի Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմի առաջնորդ: 1988-ին ձեռնադրվեցի եպիսկոպոս...

Ժամանակին Նոր Նախիջեւանը առանձին թեմ էր եւ առաջնորդը նստում էր այնտեղ՝ Դոնի-Ռոստովում: Բայց հետագայում, մանավանդ 1930-ական թվականներին, երբ եկեղեցիներն ամենուրեք փակվում էին, հոգեւորականների թիվը նույնպես նվազում էր, թեմը կորցրեց իր ուժը:

1955-ին վերաբացվեց Մոսկվայի այս փոքրիկ եկեղեցին: Առաջնորդը տեղափոխվեց այստեղ: Այս թեմի մեջ են մտնում բացի Ռուսաստանից նաեւ Ուկրաինան, Բելոռուսիան, Մերձբալթյան հանրապետությունները, բայց վերջիններս իբրեւ համայնք, այլ ոչ թե որպես եկեղեցիներ: Առ այսօր ունենք 7 եկեղեցի. Մոսկվայի Ս. Հարությունը, իբրեւ ադրոռանիստ, վերջին տարիներին բացված Լենինգրադի եկեղեցին, Սոմավիրի, Ռոստովի, Չալղըրի, Բուդյոնովկայի, Վլադիկավկազի եկեղեցիները: Սրանք գործող եկեղեցիներ են: Այժմ, մոտ 15 եկեղեցի էլ վերակառուցվում է, այդչափ էլ պետք է վերակառուցվի: Մոտ ապագայում կկազմվեն մոտ երեսուն համայնքներ եւ թեմ համար, շատ դժվար կլինի ամենուրեք հասնել, օգնել, քանզի միայն Ռուսաստանում 1,5 մլն. հայություն կա: Ծրագիր կա Մոսկվայում երկրորդ եկեղեցին կառուցելու: Լենինգրադում նույնպես ուզում են երկրորդ եկեղեցին կառուցել: Ի դեպ, այն կարող է հիմք ծառայել Մերձբալթյան 5 քաղաքների՝ Տալլինի, Ռիգայի, Վիլնյուսի, Տարտուի, Կալայոեդայի հայ համայնքների համար: Եկեղեցիներ կառուցելու դիմումներ կան Ռուսաստանի մի շարք քաղաքներից՝ Վոլգոգրադից, Սարատովից, Կոստրոմայից, Տվերից, Ռյազանից, որոնցում բավականին մեծ թվով հայություն կա եւ նույնպես հոգեւոր օջախների պահանջ ունեն:

- Այստեղ, եկեղեցու բակում, ամեն կիրակի, մոսկվարնակ հայերի հետ հավաքվում են նաեւ Ադրբեջանից գաղթած հայ փախստականները: Ինչպիսի՞ն է այժմ նրանց վիճակը:

- Մոսկվայի հյուրանոցներում մնացել են հիմնականում չքավոր, անտեր, հարազատներ չունեցող մարդիկ: Նրանք, ովքեր աղաղակված էին, ժամանակին Կիրովաբադից եւ Բաքվից գնացին Հյուսիսային Կովկաս, մի զգալի մասը տեղավորվեցին Մոսկվայի շրջակայքում, շատերն էլ դիմումներ են տվել ԱՄՆ մեկնելու համար: Հիմա Մոսկվայում ապրող փախստականների թիվը տատանվում է՝ տարբեր թվեր են ասում. 6 հազարից մինչեւ 15 հազար:

- Հայ հասարակության հետ ձեր շփումներից երեւի ժամանակ տեղյակ եք, թե ինչ ընդհանուր մթնոլորտ է տիրում: Ինչպիսին է տեղի հայերի վերաբերմունքը Հայաստանի անկախության հանդեպ:

- Բավականին դատապարտելություն կա այս հարցի մեջ:

Այսօրվա դայմաններում, երբ ղարաբաղյան հարցի հետեւանքով 600 հազար հայություն դրված է ծանր կացության մեջ, չի բացառվում նաեւ, որ լրիվ անկախության դայմաններում կկորցնենք ողջ Ղարաբաղը: Դա է մեզ հուզում Նախիջեւանի ճակատագիրը: Եթե մենք միայն մտածենք Հայաստանի մասին, աղա վաղը հրաժեշտ կտանք նաեւ Զանգեզուրին, ողջ Հայաստանին: Նկատի ունեմ նաեւ այն, որ նշմարվում է հայության արտաքին հոսք դեպի արտասահման: Այս հարցում, մենք միայն մեզ պետք է մեղադրենք: Անկախության հարցն այսօր բռունցքով դնել կենտրոնի առաջ, նշանակում է խաչ քաշել ոչ միայն Վրաստանի հայության վրա, այլեւ 1,5 մլն Ռուսաստանի հայության: Այսօր տեղի հայությունը տհաճ տարր է համարվում այստեղ, աշխատում են նրան հալածել: Ուստի, պետք է ամեն ինչ անենք, որպեսզի պաշտպանենք մեր հայրենակիցներին՝ կտրուկ քայլերի չդիմենք:

- Իսկ դուք Ռուսաց եկեղեցու միջոցով որեւէ քարոզչական աշխատանք չե՞ք տանում:

- Նախ ասեմ, որ Ռուսաց եկեղեցին պետական եկեղեցի է եւ կատարում է այն, ինչ որոշում է երկրի ղեկավարությունը: Հիշում եմ, 1989-ին այստեղ տեղի ունեցավ միջազգային համաժողով՝ նվիրված երջակա միջավայրի պաշտպանությանը: Այն հաջողեց Բաքվի ջարդերին: Ես դիմեցի ռուս հոգեւորականությանը, որպեսզի բացմանը մեկ ոտքե լռությամբ հարգենք անմեղ զոհերի հիշատակը: Չարեցին, որովհետեւ իշխանությունները արգելեցին: Սա արդեն նրանց կեցվածքն է: Ավելին չենք էլ կարող ակնկալել:

- Ինչու՞: Միթե հնարավոր չէ դուրս գալ այս իրավիճակից: Միթե փակվել են «ամեն ազատ տանող բոլոր ճանապարհները»:

- Ամենեւին: Բայց մենք մեր կեցվածքով չենք աղաղակում որոշակի կայունացնող մթնոլորտ: Երբ բուրհերը միութենական հանրաքվեին մասնակցեցին եւ ասացին, որ Միության կողմն են, հայերս չմասնակցեցինք եւ կտրուկ դրեցինք սեպտեմբերի 21-ի հանրաքվեն, արդեն իսկ հող նախապատրաստելով Կենտրոնի հայահաղած քաղաքականության համար: Եթե ըստ մեր կառավարության՝ առաջարկվող միութենական փաստաթղթերը ձեւական բնույթ են կրում, ինչու դրանք չստորագրել, հակառակ թշնամիներ վաստակելու: Սա զուտ իմ անձնական տեսակետն է: Սակայն ամեն մի քայլ անելուց առաջ, նախ պետք է մտածել հետեւանքների մասին, հետո միայն առաջ քայլել:

Զրուցավարեց Վարդ ԴԱՎԹՅԱՆԸ

Սեպտեմբերյան զոհերին նվիրված հուշարձան Մոսկվայում

ԱՐԱԶ ԱԼԻԶԱԴԵ.

«Եթե Մոսկվան չմիջամտեր»

«Հյուրհյոք», հունիսի 15.- Ադրբեջանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության ղեկավար Արազ Ալիզադեն անդրադառնալով Ղարաբաղի հարցին, որի պատճառով տարիների լարվածությունը Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ վերջերս վերածվել է քաղաքացիական պատերազմի, արտահայտեց այն տեսակետը, թե երկու հանրապետություններն ի վիճակի են համատեղ ջանքերով լուծել այն: Նա ասաց, որ. *«Հարցը մենք իմներս կլուծենք, միայն թե Մոսկվան Ղարաբաղի գործերին չմիջամտի: Ղարաբաղը կենտրոնի ձեռին մի գործիք է, որի միջոցով փորձ է արվում Ադրբեջանն ու Հայաստանը ստրկական կախվածության մեջ պահել Մոսկվայից: Մենք կարող էինք, երկխոսության մեջ մտնելով միմյանց հետ, օրինականության սահմաններում լուծել երկու հանրապետությունների միջեւ կովախնձոր դարձած Ղարաբաղի հարցը»:*

Ալիզադեն սոցիալիստական ինտերնացիոնալի խորհրդակցությանը մասնակցելու համար ժամանել էր Սամարկանդ: Նա տեղեկություններ տվեց Ադրբեջանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության մասին եւ նշեց, որ օրեցօր աճող այդ կուսակցությունը հիմնադրված լինելով 1979 թվականին, պաշտոնապես գրանցվել է 1989 թվականի դեկտեմբերի 10-ին: Ադրբեջանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության ղեկավարն ասաց, որ իրենք Իրանական Ադրբեջանի կամ էլ Թուրքիայի ադրբեջանցիների հետ միավորվելու որեւէ նպատակ չեն հետապնդում, պարզապես ցանկանում են հասնել ազատ, այդ թվում նաեւ Մոսկվայից անկախ գոյավիճակի: Այն հարցին, թե ինքը ինչ վերաբերմունք ունի դեսպան Վոլֆան Վուրալի Հայաստան կատարած այցից, նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ նրա հանդիպումից հետո Անկարայի ու Երեւանի միջեւ առաջացած ջերմ մթնոլորտի մասին, ասաց հետեւյալը. *«Թուրքիան քաղաքագետ պետություն է եւ կարող է փոխհարաբերությունների մեջ մտնել ցանկացած երկրի հետ»:* ■

Վրաստանն առաջարկում է հաշտեցնել հայ եւ ադրբեջանցի լրագրողներին

«Սամինֆորմ» ազգային լրատվական գործակալության տնօրեն Արչիլ Մանջգաձեն նամակներ ուղարկեց իր պատասխանակիցներ՝ «Ազերինֆորմ» եւ «Արմենպրես» գործակալությունների տնօրեններին, որոնցում առաջարկում է միջնորդ հանդիսանալ նրանց փոխհարաբերությունները կարգավորելու համար:

Այս քայլը ձեռնարկվեց Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ վիճելի բոլոր հարցերի կարգավորմանն աջակցելու Վրաստանի պրեզիդենտ Զվիադ Գամսախուրդիայի նախաձեռնության շրջանակներում:

«Վերջին ժամանակներս,- ասվում է «Սամինֆորմ գործակալության ղեկավարի նամակում,- *ազգամիջյան հարաբերությունների սրման պատճառով խախտվել են գործնական կապերը Հայաստանի եւ Ադրբեջանի լրատվական գործակալությունների միջեւ: Մենք ցանկանում նմ աջակցել խաղաղության եւ համաձայնության վերականգնմանը եւ դա մեզ թույլ է տալիս դիմել ձեզ հետ բանակցություններ սկսելու առաջարկով»:* ■

Ազերիները կանչում են բանակցելու, բայց ինչպե՞ս

Մոսկովյան *«Կուրանտի»* թերթի հունիսի 14-ի համարում տպագրվել է երկու ծավալուն հոդված, որոնց հեղինակները եղել են Հայաստանում եւ Ադրբեջանում, հանդիպել տարբեր խավի մարդկանց եւ ընթերցողի դատին են հանձնել այն, ինչ տեսել են ու գրի առել: *«Օղակը» ուժեղ ձեռքում»* հոդվածում, ուշագրավ է հատկապես Ադրբեջանի ներքին գործերի նախարար Մուհամմեդ Ասադովի պատասխանը. *«Ես կտրականապես հաստատում եմ, որ ՕՄՈՆ-ի կողմից Չայոնի եւ Մարտունաշենի գյուղերում կատարած վայրենությունների մասին լուրերը լրիվ սուտ են: Մեր ՕՄՈՆ-ը կազմված է մոտ 500 ընտրված տղաներից, որոնք բոլորը ծառայել են կամ Աֆղանստանում, կամ դեսանտային են եղել, հատուկ նշանակության ջոկատային, կամ էլ սահմանապահ: Նրանց շարքերում հիշ չեն սպորտի վարպետները: Նրանք հայ հանցագործներ չեն: Մենք մանրամասն ստուգում ենք ամեն մի բեկնածուի եւ եթե հայրը կամ անգամ պապը բանտարկված է եղել, ջոկատի կազմում չենք ընդգրկում: Դրանք հիանալի տղաներ են»:*

Իսկ այն հարցին, թե երբ դանակահարությունների սպանված հայերի, անդամահատված կանանց մասին լուրերը սուտ են, աղա ինչու նրանք դատի չեն տալիս թերթերին, նախարարն առանց վարանելու պատասխանում է. *«Այդ ամենը սուտ է: Միա վերջերս էլ Պուգոն զանգահարեց, ինչ-որ մեկը նրան զեկուցեց էր, որ Գրիգորյան ազգանունով մեկը ըստանվել է բերանի մեջ կրակելուց: Այդ բոլոր սուտ է: Իսկ թերթերին դատի չենք տալիս, որովհետեւ ժամանակ չունենք, պետք է կարգուկանոն հաստատել: Եւ ստում են, թե իբր մեր ՕՄՈՆ-ը թալանչիությամբ է զբաղվում: Հավատացեք, ինձ մոտ ոչ մի նման դեպք չի գրանցվել»:* Նույն հոդվածում, Ադրբեջանի Գերագույն խորհրդի նախագահի առաջին տեղակալ Թելման Օրուջիեւն ավելի առաջ է անցնում եւ հայտարարում. *«Այսօրվա դեպքերին չի կարելի նայել պատմությունից կտրված: Հայկական ազգայնականությունը ձեւավորվել է դարերով: Վերջին տարիներին այն ծաղկել է: Ամեն ինչ սկսվեց 1988 թվականից, Ստեփանակերտի միտինգներից: Իսկ հետո արդեն հրադարակվեց Հայաստանի Գերագույն խորհրդի հրամանագիրը Ղարաբաղի միավորման վերաբերյալ: Քավ լիցի, մենք ինչպես կարող ենք համաձայնվել, երբ խոսքը վերաբերում է մեր երկրի մասնատմանը: Պատերազմի դադարեցման ժամադարձը մենք է. հայերը չեղյալ են համարում այդ հրամանագիրը, եւ դրանից հետո մենք նստում ենք բանակցությունների սեղանի շուրջ: Միայն դրանից հետո: Իսկ ինչ վերաբերում է կարմիր բանակի օգնությանը, աղա նա միայն պաշտպանում է իր երկիրը. չէ՞ որ Ադրբեջանը մնում է ԽՍՀՄ կազմի մեջ, իսկ Հայաստանն իրեն համարում է կողմնակի, արտասահմանյան պետություն: Այնպես որ, ԽՍՀՄ-ը պաշտպանում է իր անկախությունը եւ տարածքային ամբողջականությունը»:* Հոդվածում մեջ են բերված նաեւ պրեզիդենտ Մութալիբովի, ժողովրդական ճակատի վարչության անդամ Հիմեթ Հաջիզադեի մեկնաբանությունները, որոնք հիմնականում կրկնում են իրար:

Վերջում հոդվածագիր Իգոր Վոեվոդինը անում է հետեւյալ եզրակացությունը. *«կենտրոնին պետք էր Միութենական պայմանագիր, դրա համար էլ նրա զորքերը մտան: Ադրբեջանին, բացի իր ամբողջականությունից, շահավետ էր նաեւ հայ գրոհայինների հեռացումը: Բայց ինչո՞ւ հայերին տեղահանեցին իրենց հայրենի գյուղերից: Երեւի նրա համար, որպեսզի հետո սնփական ժողովրդի առաջ այնպիսի ուժեղ ձեռքի տպավորությունն թողնեն, որը կարող է լուծել բոլոր հարցերը: Պատմությունը վկայում է, որոշակի ժամանակաընթացքում ուժեղ, հաստատուն ձեռքը, թեեւ մատներն արյունով թաթախված, լինում է ավելի ժողովրդական»:* ■

Միջերկրականեան բժշկական առաջին գիտաժողով նուիրուած ենթաստամային վիրաբուժութեանց

Պրոֆ. Խաչատուր Բաղալեան կը ներկայացնէ Հայաստանը

Սթենի Բժշկական Միութիւնը Միջերկրականեան բժշկական առաջին գիտաժողովը կազմակերպեց 8-12 յունիս 1991 թ.: Գիտաժողովը նուիրուած էր ենթաստամային, բերանի խոռոչային եւ ուռուցքներու վիրահատումներուն:

Սոյն ժողովին իրենց մասնակցութիւնը բերին Միջերկրականի եւ արեւելքի գրեթէ բոլոր երկիրներու ներկայացուցիչները: Չորս օրերու ընթացքին մասնագէտ բժշկաբեմներու կողմէ կարդացուեցան 116 գիտական-հետազօտական դասախօսութիւններ, ցուցադրուեցան տասնեակ դժուարին եւ նորութիւն բերող վիրաբուժական տեսաերիզներ, ինչպէս նաեւ սահիկներ եւ լուսանկարներ:

Այս գիտաժողովին Հայաստանը եւ ամբողջ Խ. Միութիւնը կը ներկայացնէր պրոֆ. Խաչատուր Բաղալեանը, որ աւելի քան 35 տարիներ որպէս պատասխանատու վարած է Երեւանի բժշկական հասարակութեան վիրաբուժական ամբիոնի վարիչի պաշտօնը եւ ներկայիս կը վարէ վիրաբուժական ամբիոնի դասախօսութեանց պրոֆեսորի պաշտօնը:

Պրոֆ. Խաչատուր Բաղալեան ծնած է Գեսարէնի մօտակայ Ազաս գիւղին մէջ: Աւարտելով Երեւանի բժշկական հասարակութիւնը մասնագիտացած է Մոսկուա եւ այլուր, բերանի խոռոչի եւ ենթաստամային հիւանդութեանց եւ ուռուցքներու վիրահատումներու ծիլին մէջ:

Պրոֆ. Խաչատուր Բաղալեան գիտաժողովին ելոյթ ունեցաւ «Սուրին ենթաստամի ուռուցքներու հեռացման եւ ոսկրային պատուաստումով ենթաստամի նոր ատումի» նիւթին շուրջ: Իր դասախօսութիւնը կարդաց անգլերէն լեզուով, վիրաբուժական բացատրութիւններ սահիկներով պարզելով:

«Նոր աշխարհ»

Հայ գիտնականը միջազգային գիտական ասոցիացիայի անդամ

Հանրավարքերի ծագումնաբանության միջազգային ասոցիացիան (IAGD) հիմնադրվել է 1964 թ. Դելիում (Հնդկաստան) կայացած միջազգային երկրաբանական համաժողովի հովանավորությամբ, որն այժմ իր մեջ ներառում է տասնյակ երկրների ազգային գիտական հասարակություններ եւ անհատ գիտնականներ:

Անցած տարի (օգոստոս 10-20, 1990 թ.) Թեհրանյան մշակութային միության հովանավորությամբ, Օսլավայում բացված հանրաբերությանը նվիրված 8-րդ Միջազգային գիտաժողովին մասնակցեց եւ զեկուցումով հանդես եկավ Հայաստանի Գիտությունների ակադեմիայի երկրաբանական գիտությունների ինստիտուտի առաջատար մասնագետ, երկրաբանահանքաբանական գիտությունների դոկտոր Կարապետ Մուրադյանը: Նրա զեկուցումը նվիրված էր Հայկական լեռնաշխարհի մետաղածնական առանձնահատկություններին: Վերջերս ուրախալի լուր ստացվեց հիշյալ ասոցիացիայի քարտուղարությունից (Չեխոսլովակիա): Հաշվի առնելով հայ գիտնականի նեղդումը բնական գիտությունների այդ առաջատար ուղղության բնագավառում, գլխավոր նախագահությունը նրան ընտրել է միջազգային ասոցիացիայի անդամ: ■

digitised by A.R.A.R.@

Ուժեղ ձեռքը գուցե լավ է, սակայն կդավաճանենք ժողովրդավարությանը

Հայաստանի հանրապետության փոխնախագահ Բաբկեն Արարքյանը անցյալ մայիսին այցելեց նաեւ Ժնեւ, ուր հանդիպումներ ունեցավ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Առիթից օգտվելով, մեր թերթի Ժնեւի թղթակից Հակոբ Սարգսյանը մի քանի հարցով դիմեց նրան:

Յ. Ս.- Պրն. Արարքեան, ի՞նչ է ձեր Եւրոպա այցելութեան գլխաւոր նպատակը:

Բ. Ա.- Այցելութիւնս պաշտօնական հանգամանք չունի: Սակայն գլխաւոր նպատակը ծանօթացնելն է Եւրոպայում եւ՛ պետական, եւ՛ մասնաւոր եւ՛ հիւպատոսութեան ներկայացուցիչներին Հայաստանում տիրող ընդհանուր կացութեանը եւ, մասնաւորապէս, վերջին իրադարձութիւնները, որոնք մենք գնահատում ենք այլ ձեւով քան նախորդ երեք տարուան դէպքերը:

Յ. Ս.- Քանի որ կը խօսինք վերջին իրադարձութիւններուն շուրջ, ըստ մեզի հասած տեղեկութեանց, որոշ կուսակցութիւններ, յատկապէս ԱԻՄ-ի, Հ.Յ.Դ.-ի եւ Հանրապետական կուսակցութեան պատկանող տարրեր ձեր ուղեգիծին հետ հակադիր դիրքերու վրայ գտնուած են: Ինչպիսի դեր ունեցան անոնք Մարտունաշէնի եւ Գեղաշէնի վերջին դէպքերու ընթացքին:

Բ.Ա.- Այսօր Հայաստանում գործում է բազմակուսակցական համակարգ. կան ընդդիմախօս ուժեր, այդ թւում որոշ հարցերում ընդդիմախօս են հանդիսանում եւ՛ ՀՅԴն եւ՛ ԱԻՄը եւ՛ Հանրապետական կուսակցութիւնը, եւ՛ մի շարք այլ կազմակերպութիւններ, նաեւ՝ Համայնավար կուսակցութիւնը: Այս ընդդիմութիւնը սպանում է մասնաւոր բնոյթ այն իմաստով, որ այդ կազմակերպութիւնները Հայաստանի զարգացման վերաբերեալ ընդհանուր ամփոփած ծրագիր չունեն՝ թէ քաղաքական եւ թէ՛ տնտեսական գետնի վրայ: Դրանց ընդդիմութիւնը մասնաւոր հարցերի շուրջ է: Ցանկալի կը լինի, որ նրանք ներկայացնեն երկրներանի ամբողջական ծրագիր, որպիսին այսօրուայ Հայաստանի իշխանութիւններին թոյլ տայ վերանայելու կամ սրբագրելու իր տեսակէտները:

Ինչ վերաբերում է վերջին իրադարձութիւններին նրանց՝ մասնակցութեանը աղա ես չեմ ուզում դա բաժանել ըստ կուսակցական պատկանելիութեան: Իհարկէ՝ բոլոր կազմակերպութիւնների ներկայացուցիչներն էլ մասն են ունեցել այս գործերում, սակայն ցաւօք այդ գործերը, որ պահանջում են աւելի



լուրջ գործունէութիւն, յաճախ աւելի շատ դրսեւորւում է յայտարարութիւններով քան գործերով: Որոշ դէպքերում աւելի յայտարարութիւններ են անում՝ քան գործեր:

«Գաղափարների բանկ» հորջորջվող այս հիմնարկները սունկի պես աճում են Ամերիկայում: Վերջերս հրատարակված Ջեյմս Սմիթի *«Միջնորդ խորհրդատուները»* գիրքը հազարից ավելի նման հաստատություն է նշում, որոնցից մոտ 100 հատը՝ միայն Վաշինգտոնում: Նրանք իրենց չափսերով խիստ տարբերվում են միմյանցից: Բրուքինգզ Ինստիտյուտը, օրինակ, զբաղեցնում է հսկայական ռազմանավի նմանվող մի եռյկաթ շենք Մասաչուսեթս պողոտայի վրա, մինչդեռ ուրիշներ փոքրիկ սենյակներում են տեղադրված: Նրանց բարգավաճումը Ամերիկայում բացատրվում է երկու հիմնական պատճառներով: Առաջին՝ որովհետեւ հարուստ հիմնարկները պատրաստ են լավ վճարել մարդկանց՝ պարզապես «նստել, մտածելու» համար: Երկրորդ՝ որովհետեւ ամերիկյան կառավարման համակարգը լայն հնարավորություններ է տալիս այդպիսի ընտրյալ «մտածողներին»: Վաշինգտոնում իշխանության գլուխ անցնող յուրաքանչյուր կառավարություն ոչ միայն բաժնի վարիչներ կամ նախարարներ է նշանակում, այլ նաեւ տասնյակ ուրիշ պաշտոնյաներ: Տնտեսական խորհրդատու մարմինը եւ Պետդեպարտամենտի քաղաքականության կուրսը մշակող բաժանմունքները դրսից շատ մարդկանց են ընդունում իրենց շարքերը: Կոնգրեսի երկու պալատները նույնպես լայն հնարավորություններ են տալիս բոլոր այն մարդկանց, որոնք ժամանակին ճիշտ են կարողանում գնահատել քաղաքական իրադրությունը: Այնպես որ կառավարության եւ այդ խորհրդատու մասնագետների միջեւ դուռը միշտ բաց է: Ե՛վ Զբիգնեւ Բժեժինսկին, որը Ջիմի Քարթերի օրոք գլխավորում էր Ազգային անվտանգության խորհուրդը, եւ՝ Ռոբերտ Մըկֆարլեյնը, որն զբաղեցնում էր նույն պաշտօնը Ռեյգանի օրոք, պաշտոնանկ արվելուց հետո աշխատում են Ստրատեգիական եւ միջազգային ուսումնասիրությունների կենտրոնում: Բրենտ Սքոուքրոֆթը՝ այժմյան Ազգային անվտանգության խորհրդի պետը, մի ժամանակ նույնպես աշխատել է այնտեղ:

Երբ Ռեյգանը իշխանության գլուխ անցավ, մոտ 20 մարդ Ամերիկյան ձեռներեցության ինստիտուտից պաշտոնի նշանակվեցին նոր կառավարության մեջ: Այժմ նրանք բոլորն էլ (Ջին Քըրքփաթրիքը, Ռիչըրդ Փըրլը եւ մյուսները) վերադարձել են իրենց նախկին աշխատեղերը: Նման «գաղափարատու» հիմնարկների տնօրենները ունեն մի երազանք եւ մի մղձավանջ: Երազանքն այն է, որ իրենք կարողանան խորհրդատուներ հայթայթել նորաստեղծ կառավարությանը, իսկ մղձավանջը՝ որ կառավարության անկումից հետո բոլորին ետ աշխատանքի վերցնեն:

ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ԱՃ ՈՒ ՆՎԱՋՈՒՄԸ

Երբ սոցիոլոգ Դանիել Բելը հայտարարեց, թե՝ «վերջ գաղափարախոսությանը», անմիջապես մասնագետների պահանջարկն ավելացավ: Պրեզիդենտ Քենեդիին մտահոգող հիմնահարցը ոչ թե տարբեր գաղափարախոսությունների կամ մտածելակերպի բախումն էր, այլ կոնկրետ նպատակներին հասնելու ամենասովորական միջոցներ ու ճանապարհներ գտնելը: Այսինքն՝ բարդ եւ կրճատ հարցերի իմաստուն լուծումների ուսումնասիրությունը: Քաղաքագետները պետք է բնորոշեին իրենց առաջ դրված խնդիրը, - օրինակ՝ աղքատության վերացում կամ հաղթանակի ապահովում Վիետնամում,- իսկ ուսումնասիրող մասնագետները պարտավոր էին դրան հասնելու ուղիները մատնանշել:

Վերոհիշյալ «ժակետներում» ծախողության հասնելով, փորձառու մասնագետների վարկն ընկավ: Պահպանողականները ճնշադատեցին թե՛ Բրուքինգզին, թե՛ Ռանդ կորպորացիայի, թե՛ նույնիսկ Արտաքին հարաբերությունների խորհրդին, ասելով, որ այդ լիբերալ հաստատությունների աշխատողները սխալ ուղու վրա են: Եւ հիմնեցին «հակահիմնարկություններ»՝ որոնց ընդդիմադիր կազմակերպություններ: 1970-ականներին Ամերիկյան ձեռներեցության ինստիտուտը ընդլայնեց իր գործունեությունը: Միաժամանակ նոր հիմնարկներ առաջացան, ինչպես օրինակ «Ժառանգություն հաստատությունը» եւ «Քաղաքականության ուսումնասիրման Մենհեթենի ինստիտուտը»: Վերջինս ստեղծվեց Ուիլյամ Ջեյսիի կողմից, որն էլ դարձավ Ռեյգանի ընտրատարածքի կազմակերպողը, իսկ հետագայում էլ Կենտրոնական հետախուզական վարչության պետը: Պահպանողական «խորհրդատուների» այս նոր խմբավորումը նախընտրություն տվեց երկրի ներսում բարեկեցության զարգացման, իսկ Ռուսաստանի հետ հարաբերություններում հակամարտությունների թուլացման քաղաքականություն վարելուն: Մինչեւ 1981 թվականը սահագին աշխատանք տարվեց այս ուղղությամբ եւ Ռեյգանի առաջ փաստորեն ճանապարհը բաց էր: Այս կուրսի հաջողությունն էլ սիրեց դեմոկրատներին հիմնելու նրանց «հակա-հիմնարկությանը» հակադրվող մի այլ հաստատություն, որը կոչվեց Առաջադիմական քաղաքականության ինստիտուտ: Այն պատկանում է դեմոկրատների աջ թեւին: Իսկ 1986-ին հիմնված Տնտեսական քաղաքականության ինստիտուտը պատկանում է դեմոկրատների ձախ թեւին:

ԱՆԳԼԻԱՅԻ «ԹՈՌԵՐԸ»

Մոտավորապես միեւնույն ժամանակաշրջանում Մեծ Բրիտանիայում նույնպես փոփոխություններ կատարվեցին: Հարոլդ Ուիլսոնի եւ Ջեյմս Քալաղանի «լճացման տարիների» ղեկավարումից հոգնած՝ թեչերիզմը, ռեյգանիզմի նման, սկսեց մեծապես հենվել նեոպահպանողականների «պայծառ» մտքերի վրա:

Սըր Քիյթ Ջոզեֆի հետ համատեղ Թեչերը 1974-ին հիմնեց Քաղաքականության ուսումնասիրությունների կենտրոնը (ՔՈՒԿ), որի այժմյան տնօրեն Դեյվիդ Ուիլեթսն ասում է, որ *«ՔՈՒԿ-ն սկսեց գործել կատարված ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա, որոնք կառավարությունից պահանջում էին ավելի մեծ ներդրումներ եւ ավելի առողջ դատողություն»:*

Քարտուղարների հետ միասին ընդամենը 7 հոգուց բաղկացած այս փոքրիկ կենտրոնն էլ կարողացավ հովանավորել երկրում իրականացվող այն հիմնական միջոցառումները, որոնք արժանավորապես բնորոշվեցին որպես թեչերիզմ: Դրանց մեջ մտնում է առաջին հերթին սեփականաշնորհումը՝ «ձեռներեցության շնորհը», որի միջոցով կառավարությունը կարողացավ փողի արժեզրկման առաջն առնել:

Թեչերի անկումը բրիտանացի պահպանողական «խորհրդատուներին» կարծես անհուսալի վիճակում թողեց: Քաղաքական ուսումնասիրությունների ինստիտուտի տնօրեն Բիլ Դանիելի կարծիքով, նրանք *«Բոռեր են, որոնք փրթեցին, երբ նրանց իշխանիկն էր պաշտոնի գլուխ: Այժմ նրանց հեղինակությունը կտրուկ ընկել է»:* Մինչդեռ ՔՈՒԿ-ը ցանկանալով աղացուցել, որ Դանիելը սրխալ է, կառավարության նոր վարչապետ նշանակեց Ջոն Մեյջորին: Սակայն կառչած մնալով պահպանողականներին, ՔՈՒԿ-ը կարող է կորցնել արմատական փոփոխություններ պահանջելու իր իրավունքը: Կենտրոնի անորոշությունը երեւում է հենց այն բանում, որ այն ոչ մի կարծիք չունի Եւրոպական շուկայի աղագայի մասին:

Տարօրինակ կարող է թվալ, որ մի տարի առաջ, անդունդի եզրին կանգնած մի այլ հաստատություն, այժմ ամենամեծ հնարավորությունն ունի դառնալու հերթական առաջավոր «Գաղափարների բանկը»: Դա Սոցիալական շուկա ընկերությունն է, որը հիմնադրվել էր Դեյվիդ Օուենի սոցիալ-դեմոկրատներին օգնելու նպատակով: Այդ կուսակցությունը այժմ գոյություն չունի, սակայն անունը մնում է եւ հետզհետե ավելի տարածվում:

Պահպանողական կուսակցության նոր նախագահը՝ Քրիս Պաթենը, «Մարքսիզմն այսօր» ամսագրի թղթակցին ասել է, որ հետաքրքրվում է սոցիալական շուկայի գերմանական գաղափարով, որը հնարավոր է համարում կապիտալիզմի ձեռներեցությունը զուգորդել հասարակական հսկողության հետ, այսինքն անհատական նախաձեռնությունը դնել հասարակական հսկողության տակ: Առաջ գնալով՝ Պաթենը նույնիսկ ավելացրել է, թե հնարավոր էր Անգլիայում հիմնել գերմանական քրիստոնյա-դեմոկրատներին օժանդակող Կոնրադ Ադենաուեր Շտիֆտունգի նման մի հաստատություն: Սակայն եթե Անգլիան Գերմանիայից է օրինակ վերցնելու, ապա շուտով այն կարող է վերադառնալ նախկին, հնացած բանաձեւերին եւ մտածողությանը:



ԽՆԴՐԵՄ, ԱՌԱՆՑ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ

Առաջին հայացքից թվում է, թե գերմանական «գաղափարատու» հիմնարկները գաղափարախոսությունից զուրկ են, սակայն նրանցից ամենամեծերը Կոնրադ Ադենաուեր եւ Ֆրիդրիխ Էբերտ հաստատությունները երկուսն էլ քաղաքական կուսակցությունների ծնունդ են: Եւ կուսակցությունների հետ իրենց ունեցած հարաբերություններն էլ սահմանափակում են հետազոտությունների նրանց ոլորտը: Օրակարգից դուրս են մնում այնպիսի թեմաներ, կամ նույնիսկ եզրահանգումներ, որոնք կարող են կուսակցություններին ծանր կացության առաջ դնել: Ներգաղթը օրինակ, որը չափազանց հրատապ եւ կնճռոտ հարց է, չի ուսումնասիրվում: Հենց հարց է տրվում այդ մասին, Ադենաուերի հաստատության աշխատակիցներից Ջոզեֆ Տիսինգը բազկաթոռի վրա անհանգիստ շուռ ու մուռ գալով, պատասխանում է. *«դա քաղաքական հարց է, ոչ գիտական»:* Նույն տրամաբանությամբ անցյալ տարի նրանք խուսափեցին քննարկել այն հարցը, թե Խորհրդային Միության մասնատման դեպքում ո՞վ էր վերահսկելու խորհրդային միջուկային զենքի կուտակումները:

Հարց է ծագում, թե գերմանացի «գիտնականները» երբեւէ հետեւելու են իրենց անգլիախոս գործընկերների օրինակին: Ոմանք այդ ուղղությամբ որոշ հակումներ նշմարում են, դրա վառ ապացույցը համարելով այն, որ 1988-ին Մյունխենի մոտ գտնվող Գիտություն եւ քաղաքականություն հիմնարկության պետ է նշանակվել Մայքլ Շտուրմերը՝ պահպանողական մի պատմաբան, որն ունի փիլիսոփայական հակումներ: Նա Կանցլեր Քոլի մտերիմն է, եւ շատ հաճախ է հանդես գալիս հեռուստատեսությամբ: Չնայած նրա նշանակումը որոշ շրջանակներում վախ առաջացրեց, որ Գերմանիան գնում է դեպի «քաղաքականացում», սակայն առայժմ Շտուրմերը հավատարիմ է մնում գերմանական ավանդական ուղղություններին: Գերմանիայում դեռ չեն հասել այն բանին, որ ձկուն մտածելակերպի միջոցով գիտական եւ քաղաքական այդ երկու աշխարհները միանան իրար, այնպես, ինչպես դա արվում է ԱՄՆ-ում կամ Անգլիայում:

ԱՐԵՒԵԼՔՆ ԱՐԵՒԵԼՔ, ՍՈՍԿՎԱՆ՝ ԱՐԵՒՍՈՒՏՔ

Եթե գերմանական մտածելակերպը տարօրինակ է, ճապոնականը՝ աղջեցնող, ապա խորհրդայի՞նը...

Ճապոնիայում նմանատիպ հաստատությունները գլխավորապես առեւտրական կամ ֆինանսական մեծ ընկերությունների մասնաճյուղերն են, ինչպես օրինակ Նոմուրա, Դայվա եւ Միցուբիշի գիտահետազոտական ինստիտուտները: Այս հիմնարկները հսկայական քանակի հաղորդագրություններ են պատրաստում այն բոլոր խնդիրների շուրջ, որոնցով հետաքրքրվում են իրենց հովանավորողները: Նրանք սովորաբար լավ են նկարագրում տվյալ հարցի դրույթները, սակայն ըզգուշանում են խորը վերլուծություններ անելուց, քանի որ եզրահանգումները կարող են չհամընկնել «Բոսի» տեսակետների հետ: Եթե Ամերիկայում եւ Անգլիայում «գաղափարատու» այդ կազմակերպություններն աշխատում են ներգործել կառավարության վրա, ապա Ճապոնիայում կառավարությունն է, որ նրանց միջոցով փորձում է ներգործել հասարակության վրա:

Խորհրդային Միությունում գիտահետազոտական ինստիտուտների շատ աշխատակիցներ այժմ քաղաքականության ասպարեզ են մտել որպես Գորբաչովի կամ Ելցինի խորհրդականներ կամ առանձին քաղաքագետներ: Գլխավոր խորհրդատուները դեռեւս մնում են կառավարության կողմից ֆինանսավորվող գիտությունների ակադեմիայի կից գործող հիմնարկությունները, որոնց շարքում կարելի է նշել ՑԵՄ-ին (Տնտեսագիտության եւ մաթեմատիկայի կենտրոնական ինստիտուտ) եւ ՆՄԵՄՈ-ին (Համաշխարհային տնտեսագիտության եւ միջազգային հարաբերությունների ինստիտուտ): Բայց նրանց գործունեությունն այժմ զլաստնոստի օրոք փոխվել է:

1960-ի կեսերին, տեսնելով, որ տնտեսական համակարգը ճիշտ ուղու վրա չէ, Կրեմլը փորձեց այն մի փոքր փոխել: ՑԵՄ-ին առաջարկվեց տարբերակներ ներկայացնել: Սակայն կոսիգինյան բարեփոխությունները հաջողության չհասան: Եւ ՑԵՄԻ-ն ետ քաշվեց: Քառորդ դար անց, Գորբաչովի բարեփոխություններով հաջալերված, Ստանիսլավ Շատալինը՝ ՑԵՄԻ-ի բաժնի վարիչը, առաջ քաշեց այսպես կոչված «500 օրվա ծրագիրը», որը սակայն Գորբաչովի համար չափազանց «հախուռն» թվաց: ՑԵՄԻ-ն այս անգամ ետ չքաշվեց, այլ անցավ Ելցինի կողմը: Մոսկվայում շատ խորհրդատուներ այժմ նույնպես անցել են Ելցինի կողմը:

Քաղաքականության եւ տեսաբան խորհրդատուների միջեւ գտնվող դուռը սկսել է ճռռվել, երբ Էդուարդ Շեւարդնաձեն հրաժարվեց իր պաշտոնից, նա անմիջապես հիմնեց Խորհրդային Միությունում առաջին ինքնաֆինանսավորվող «գաղափարական բանկը», որը կոչվում է Արտաքին քաղաքականության ասոցիացիա: Սա էլ հենց ակնկալվում է, որ դառնա արտաքին հարաբերություններում «նոր մտածողության» սկզբնավորողը:

Զարմանալին այն է, որ հենց Խորհրդային Միությունում մարդիկ սկսեցին գնահատել այդ տեսաբաններին, ԱՄՆ-ում, ընդհակառակը, սկսեցին թերագնահատել նրանց: Ճիշտ է Դուկակիսն էր ասել ժամանակին, թե *«ոչ թե գաղափարախոսությունը, այլ մրցակցությունն է կարեւորը»*, սակայն Բուշն էր, որ դարձնելով իր անձնական համոզմունքը, օգտագործեց այն իր քաղաքականության մեջ: Այսօր Վաշինգտոնում, որտեղ գաղափարախոսությունը հնացած հասկերգ է, իսկ փորձառու մասնագետներն էլ ցանկալի չեն վերագտել իրենց նախկին հեղինակությունը, «գաղափարների բանկերը» մատնված են փոքր կացության: Նրանցից շատերն սկսել են կրճատումներ կատարել, իրենց աշխատակիցների շարքերում:

Աշխարհում «նոր կարգ ու կանոն հաստատելու» ջանքերից հավատացումներն առայժմ մնում են գործնականորեն անիմաստ նախադասություններ: Այնպես որ նորօրյա Մաքիավելիների համար խորհելու շատ նյութ կա:

The ECONOMIST

25 մայիս, 1991

digitised by A.R.A.R.@

Բոբ Uտրաուսը ԱՄՆ-ի դեսպան Խորհրդային Միությունում

Վերջինս նոր է միայն սկսել թերթել անգլերեն-ռուսերեն զրուցարանը: Իր 72-ամյա կյանքի ընթացքում նա միայն հինգ ամիս է աշխատել դիվանագիտության բնագավառում, այն էլ, որպես 1979 թ. արաբ-իսրայելյան կոնֆլիկտի շուրջը տարվող բանակցությունների ներկայացուցիչ:

Անցած տարի ԱՄՆ-ում մեծ աղմուկ հանեց վաշինգտոնցի իրավաբան Բոբ Uտրաուսի ժաղովական «Մացուսիտա» ընկերության հետ կատարած գործարքը, որի տված շահույթը հասնում էր 8 մլն դոլլարի: Սակայն Uտրաուսի համար հետաքրքիր չի լինի փոխարինել իր նախորդին: Ջեկ Մեթլոկը, որը փորձված ու հմուտ դիվանագետ է, այդ պաշտոնում աշխատեց սահմանվածից մեկ տարի էլ ավելի՝ չորս տարի: Մեթլոկը շրջեց ողջ Խորհրդային Միությունում եւ հայտնի դարձավ իր մտքի պայծառության ու ակտիվ գործունեության շնորհիվ: Բացի անգլերենից խոսում էր նաեւ ֆրանսերեն, գերմաներեն, չեխերեն, սուխալի, ռուսերեն եւ անգամ ԽՍՀՄ ժողովուրդների մի քանի լեզուներով:

Ի տարբերություն Մեթլոկի, Uտրաուսը հայտնի է որպես գործարար մարդ, համոզված այն բանում, որ խորհրդա-ամերիկյան հարաբերությունները պետք է կենտրոնանան բիզնեսի ասպարեզում: Նոր դեսպանը անցյալում եղել է ԱՄՆ-ի դեմոկրատական կուսակցության Ազգային կոմիտեի նախագահ:

Պահպանողականների պրեզիդենտ Ջոն Ջրեգանը այն կարծիքն է հայտնել, թե «Դա սխալ եւ անժամանակ նշանակում է: Այժմ, երբ երբեւէ մենք կարիք ունենք մի մարդու, որը հաջողակ է ամերիկա-խորհրդային հարաբերություններին, իսկ փոխարենն ունենք մեկի, որն ավելի շատ տիրապետում է առուտրի արվեստին»:

Ի դեպ, նախկին Uտրաուսին նշանակելը, Միացյալ Նահանգների կառավարական շրջաններում հոլովվում էր հայազգի Էդուարդ Շեւարդնաձեի թեկնածությունը, որն այժմ ԱՄՆ-ի դեսպանն է Միհիայում, լավ տիրապետում է ռուսերենին եւ 80-ականների սկզբին եղել է Մոսկվայի ամերիկյան դեսպանատան առաջին քարտուղարը:

Uտրաուսին անվանում են «պարոն դեմոկրատ», թեեւ նա իր բիզնեսը հմտորեն կազմակերպում էր՝ լինելով սերտ հարաբերությունների մեջ երկու ուժեղ կուսակցությունների հետ:

«Բոբ Uտրաուսը շատ հավատարիմ ընկեր է,- կասկածում էր Ջիմի Քարտերը: *Նա մի ողջ շաբաթ աղասում էր, թե ընտրություններից հետո արդյո՞ք կմնաք Ռոնալդ Ռեյգանի հետ»:*

Uտրաուսը Ջորջ Բուշի վաղեմի եւ մոտ ընկերն է:

Բուշը կարծում է, որ այս նշանակմամբ ինքը օգնած կլինի Գորբաչովին, քանզի Uտրաուսը կարող է օգնել խորհրդային առաջնորդին արագացնելու բարեփոխությունները:

Նա ունի ԱՄՆ-ի եւ արտասահմանի իր ընկերների անձնական շրջանակը: Դրանք հայտնի եւ անհայտ մարդիկ են, որոնց ժամանակին նա շատ թե քիչ աջակցել է:

Բեյքերը մի քանի շաբաթ առաջ ճաշի է հրավիրում Uտրաուսին եւ առաջարկում Մոսկվայում աշխատել դեսպան: Նախքան առաջարկը, Բեյքերը ցանկանում է Պենտագոնից որեւէ պրոֆեսիոնալի նշանակել, սակայն Բուշը ցանկացել է Uտրաուսին, եւ Բեյքերը համաձայնվել է: Uտրաուսն ու Բեյքերը երես առ երես հանդիպել են դեռ 1980-ի ընտրությունների ժամանակ, երբ Uտրաուսը ղեկավարում էր Քարտերի ընտրական արշավը, իսկ Բեյքերը օգնում էր Ռոնալդ Ռեյգանին: Այնուամենայնիվ, երկուսն էլ բավականին մտերիմ են: Uտրաուսը գայթակղվել է, բայց ցանկացել է խորհրդակցել նաեւ տիկնոջ հետ: Վերջինս համաձայնվել է, ասելով, որ այդ պաշտոնը նրա սպառվող կյանքի համար լավ կրակոց է:

Uտրաուսը տարակուսել է եւ հեռաձայնել Բուշին, ասելով. *«Պարոն պրեզիդենտ, թեեւ ես շատ մարդամոտ եւ շփվող անձնավորություն եմ, բայց ինչպե՞ս կարող եմ հաղորդակցվել մի երկրում, որի լեզուն չգիտեմ եւ այնտեղ չկա պատշաճ հեռախոսային համակարգ»:*

Բուշը պատասխանել է. *«Դու կգտնես ճանապարհը»:*

Այս խոսակցությունից հինգ օր անց, տեքսասցի երեք ընկերները՝ Բուշը, Բեյքերը եւ Uտրաուսը Սպիտակ տանը հաստատեցին վերջինիս նշանակումը:

Այնուհետեւ, լրագրողների այն հարցին, թե ինչպես պետք է Uտրաուսը լեզվական պատնեշը հաղթահարի, նա ծիծաղելով պատասխանել է. *«Մենք կօգտագործենք երկու թարգմանիչների, մեկին ռուսերենի համար, մյուսին՝ հայերենների»:*

Սակայն Uտրաուսը կարող է չկատարել երեք տարի Մոսկվայում մնալու իր խոստումը: Եթե Uտրաուսը սկսի իր ժամադրությունները հավաքել տարվա ընթացքում, ապա Խորհրդային Միության ավանդատուները հմտորեն պետք է իրացնեն իրենց ռուբլիները:

Նշանակումից հետո, 24 ժամվա ընթացքում Uտրաուսը կարողացավ 338 անգամ հեռախոսով կապվել իր վաղեմի ընկերներին, գործընկերներին, այդ թվում նաեւ Անատոլի Դոբրինինին, որը 1962-1986 թթ.-ին ԱՄՆ-ում Խ. Միության դեսպանն էր, եւ հայտնել իր նոր նշանակման մասին: Մինչդեռ Մոսկվայում հայտնի խորհրդային դիվանագետ Վալենտին Բերեժկովը տարակուսում է, ասելով. *«Uտրաուսը Բուշի ընկերն է եւ շատ մարդիկ հարցնում են, թե ինչու են այդ ծեր մարդուն ուղարկում այնպիսի տեղ, որտեղ այժմ պահանջվում են ռազմածովային ուժի նյարդեր եւ կենսունակություն»:* ■

ԿԱՆԽՈՐՈՇԻՉ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Խոմեյնին երկու անգամ հանդիպել է շահին

Խոմեյնիի կենսագիրները տարբեր առիթներով բանիցս անդրադարձել են Իրանի արքա Մոհամմադ Ռզա շահի եւ Իմամի հանդիպումներին: Սակայն այդ տեղեկությունները հիմնականում ակնարկային բնույթ են կրել եւ էական ոչինչ չեն հաղորդել: Վերջերս, Իմամ Խոմեյնիի որդին, հանդես գալով Թեհրանում հրատարակվող *«Սբրար»* թերթում, առաջին անգամ հաստատեց այդ հանդիպումների մասին շրջանառության մեջ մտած կցկտուր տեղեկությունների հավաստիությունը, նշելով, որ այդ տեսակցությունները Այաթոլլահ Բորուջերդիի կողմից իր հորը տրված հանձնարարականներ էին:

Իմամի որդի Սիմադ Խոմեյնին իր հրապարակման մեջ չի նշում կայացած հանդիպումների տարեթիվը, սակայն, ըստ հավաստի աղբյուրների, հանդիպումները տեղի են ունեցել 1953-54 թթ: Խոմեյնին, որ հայտնի էր Հաջաղա Ռուհոլլահ անվամբ, այդ ժամանակ բնակվում էր իրանական Կում քաղաքում եւ մինչեւ շահի հետ հանդիպման օր նրանանակելը, Թեհրանում մի քանի օր բնակվել է Այաթոլլահ Քաշանիի տանը: Ըստ Սիմադ Խոմեյնիի, Հաջաղա Ռուհոլլահը երկու անգամ հանդիպել է շահին:

Հայտնի է, որ հանդիպումները կայացել են Սաղարաղ պալատում, արծարծված հարցերի մասին առայժմ ոչ մի տեղեկություն չկա: Սիմադ Խոմեյնիի հավաստումով, պարոն Բորուջերդիի օրոք տեղի ունեցող քաղաքական անցուդարձի պատճառով էր, որ նա (Խոմեյնին) հրաժարվելով Բորուջերդիի եւ մյուս բարձրաստիճան հոգեւորականների կողմից հանձնարարություն ստացավ տեսակցել շահին: Ըստ Սիմադ Խոմեյնիի, հոգեւորականները ցանկանում էին իրենց խոսքը մի ներկայացուցչի միջոցով փոխանցել շահին: Իսկ նման հանդուգն հանձնարարություն կարող էր կատարել միայն Հաջաղա Ռուհոլլահը: Նա երկու հանդիպումների ժամանակ էլ անքերի կատարել է հանձնարարությունները եւ շահին զգուշացրել իր վարած քաղաքականության մասին:

Հարկ է նշել, որ այդ օրերին իշխանության ղեկը գտնվում էր երկրի վարչապետ Մոսադդեղի ձեռքին: Վերջինս, իբրեւ հզոր մի անհատականություն, կարողացել էր սահմանափակել շահի իշխանությունը: Այաթոլլահ Բորուջերդին եւ Կումի բարձրաստիճան հոգեւորականները, հատկապես Մոսադդեղի եւ Քաշանիի հարաբերությունների մթագնումից հետո, խիստ անհանգստացած էին վարչապետի քաղաքականությունից, եւ ընդդեմ նրա, շահից գործնական քայլեր էին պահանջում: Ուստի, չի բացառվում, որ Մոհամմադ Ռզա շահ - Հաջաղա Ռուհոլլահ հանդիպումների ժամանակ արծարծվել են նաեւ Կումի հոգեւորականների տագնապն արտահայտող հարցերը: Այն փաստը, որ մինչեւ շահի հետ տեսակցության օր նշանակելը, Խոմեյնին բնակվել է Քաշանիի տանը, հենց դա է վկայում:

Շահի կողմից Մոսադդեղի կառավարության դեմ կազմակերպված հայտնի հեղաշրջմանը նախորդող օրերին Քաշանիի բնակարանը դարձել էր հակամոսադդեղյան ուժերի հավաքատեղի: Այդ օրերին Քաշանիի բնակարան այցելած անձինք վկայում են, որ այստեղ բազմիցս տեսել են նաեւ Խոմեյնիին:

Գ. ՍՈՍՔԵԼՅԱՆ

ԲՈՒՇԸ ԿՀՎ-Ի ՆՈՐ «ԲՈՍ» Է ԸՆՏՐՈՒՄ

Վերջերս պրեզիդենտ Բուշը Ռոբերտ Գեյթցին երկրորդ հնարավորությունը տվեց դառնալու Կենտրոնական հետախուզական վարչության տնօրենը, չնայած 4 տարի առաջ մերժել էր նրա թեկնածությունը, պատճառաբանելով, որ Գեյթցի մասը խառն է «Իրան-Կոնտրա» սկանդալային գործում:

Ընտրելով Գեյթցին, որը կառավարական աղարատում 35 տարվա ծառայության փորձ ունի, առանց սակայն կոնկրետ քաղաքական որեւէ դիմագիծ կամ պլատֆորմ ունենալու, Բուշը մի անգամ էլ ցանկացավ ընդգծել իր այն տեսակետը, թե լրտեսական գործակալությունները պարտավոր են պարզապես տեղեկություններ հավաքել՝ հեռու մնալով քաղաքականությունից: Նա խոստովանեց, որ ինքը հենց այդպես էլ վարվում էր, երբ 1976-ին այդ գործակալության տնօրենն էր, եւ ավելացրեց, որ այդ չեզոքությունը նա կարողանում է պահպանել հակառակ այն փաստին, որ 1966-ից մինչեւ 1970 թվականներ նահանգի կոնգրեսմեն լինելուց հետո առ [illegible]-ին էր տեղափոխվել Հանրապետական Ազգային կոմիտեի նախագահի պաշտոնից:

Այս քայլով Բուշը փաստորեն խուսափում է կրկնել իր նախորդի՝ Ռեյգանի սխալը, որի իշխանության օրոք Ուիլյամ Քեյսին՝ այդ ժամանակվա ԿՀՎ-ի պետը, ոչ միայն լրջորեն ներգրավված էր քաղաքականության մեջ, այլ հողարկված մի հանդուգն քայլի դիմելով՝ սկսել էր զենք վաճառել Իրանին եւ ստացած շահույթի մի մասն օգտագործել Նիկարագուայի ապստամբներին զինելու համար: «Իրան-Կոնտրա»ի այս գործողության բացահայտումն էլ մեծապես թուլացրեց Ռեյգանի վարչակարգը:

47 տարեկան Գեյթցին ճանաչում են որպես երկրի քաղաքականության պատշաճական կուրսին հավատարիմ մի անձնավորություն: Դա չի նշանակում, սակայն, որ նա իր անձնական կարծիքը չունի: Ընդհակառակը, նա չափազանց կայուն գաղափարների տեր մարդ է եւ 1989-ին Ջեյմս Բեյքերի հետ նույնիսկ ընդհարվել է՝ Գորբաչովի վերակառուցողական ծրագրերի հանդեպ Բեյքերի լավատեսական հայացքներին հակադրելով իր թերահավատությունը: Գեյթցն այն ժամանակ ճառ էր պատրաստել, որը սակայն չարտասանվեց: Բեյքերը գտավ, որ այն շատ հոռետեսական է:

Գեյթցն այժմ զբաղեցնում է Ազգային անվտանգության գծով փոխխորհրդատուի պաշտոնը եւ ամենահարմար թեկնածուն է համարվում փոխարինելու Ուիլյամ Ուեբստերին, որ վերջերս հրաժարվեց ԿՀՎ-ի տնօրենի իր պաշտոնից:

Բուշի խորհրդականների հետ զրույցների ժամանակ ազդեցիկ սենատորները հավաստիացրել են, թե իրենք կողմնակից են Գեյթցի թեկնածությունը: Բուշի վարչակարգը հույս ունի, թե ժամանակը հարթած կլինի Գեյթցի դեմ եղած փաստարկները, մանավանդ որ նա իրեն շատ լավ դրսեւորեց Պարսից ծոցի ճգնաժամի օրերին: Սակայն, ակնկալվում է, որ օրենսդիր մարմնի ներկայացուցիչները «դժվարություններ հարուցեն»:

«Ես ավելի մանրամասն տեղեկություններ եմ պահանջում «Իրան-Կոնտրա» գործի վերաբերյալ»,- ասաց սենատոր Հոուրդ Մեթցենբաումը (դեմոկրատ՝ Օհայոյից), որը միակն էր Սենատի Հետախուզական ընտրյալ կոմիտեի անդամներից, որ բացահայտորեն քննադատեց Գեյթցի թեկնածությունը: *«Բուշի ընտրությունը զարմացնում եւ վրդովեցնում է ինձ»,-* ասաց նա:

Այնուամենայնիվ, հարցի քննարկումը դեռ մի քանի օր պետք է շարունակվի եւ առաջարկության վավերացման համար վերջնական քվեարկություն չի սպասվում մինչեւ օգոստոս կամ սեպտեմբեր:

Այս քայլը, որով Բուշը ցանկանում է մի կողմից կրճատել հանդարտեցնել «Իրան-Կոնտրա» սկանդալի առնչությամբ, եւ մյուս կողմից վարձահատույց լինել այնպիսի հավատարիմ մի անձնավորության, որ եղել է ու կրկնա իր կուրսի կողմնակիցը, առաջ է բերելու այլ կարեւոր փոփոխություններ Ազգային անվտանգության խորհրդի կազմում եւ Սպիտակ տանը, որը վաղուց էր հետամուտ լինում Ուեբստերին աշխատանքից ազատելուն:

ԿՀՎ-ում, ամենօրյա օպերատիվ աշխատանքի համար, ամենահարմար թեկնածուն, ուրեմն, Գեյթցն է ճանաչված, որը բյուրոկրատ լինելով հանդերձ, բազմիցս ապացուցել է, որ հսկայական փորձառություն ունի հետախուզական աշխատանք տանելու եւ, իրոք, հմուտ է այդ ասպարեզում: Պաշտոնական հաղորդումների համաձայն, ԿՀՎ-ի գործունեությունն այսուհետեւ առավելապես ուղղված է լինելու զարգացող երկրների տնտեսական, սոցիալական եւ քաղաքական հարցերի քննարկմանը եւ ուսումնասիրմանը:

ԷԴՎԻՆ ՌՈԶԵՆԹԱԼ
New York Times

Չիչոլինան ամուսնանում է երկրորդ անգամ



39-ամյա Չիչոլինան, իսպանական պոռնոգրաֆը, խորհրդարանի անդամը եւ փոքացած 36-ամյա ամերիկացի քանդակագործ [illegible] Քուինը [illegible] ամուսնությունը տոնեցին Բուդապեշտում՝ հարսի ծննդավայրում: Դեռապատմությունին, ծննդով Իլոնա Ստաղերը, ասաց, որ *«իրատես քրայնացել է նկարագրական արարողության ժամանակ տրված երդումներից»: «Ես տարտամ էի,-* ասաց նա,- *երբեմ այդքան չեմ քրայնացել իմ շուրջերի ժամանակ»:* Բայց ամուսնությունը չի փոխի նրա ոճը: *«Նույնիսկ եթե ես հագնեի ամենագեղեցիկ զգեստները եւ փորձեի երգել, ոչ ոք չէր ճանաչի: Մերկությունն իմ արհեստն է»,-* ասաց նա: ■

digitised by A.R.A.R.@

Ա. Վլադիսլավլեւը «Մեծ յոթնյակի» հետ ԽՍՀՄ-ի համագործակցության խնդրի մասին

ԽՍՀՄ գիտաարդյունաբերական միության գործկոմի նախագահ Ալեքսանդր Վլադիսլավլեւը «ԻՏԱ»-ին տված հարցազրույցում համոզվածություն հայտնեց, որ Լոնդոնում կայանալիք «Մեծ յոթնյակի» ղեկավարների հետ առաջիկա հանդիպման ժամանակ Միխայիլ Գորբաչովը նրանց կողմից կանխապես կաղահովի *«վստահություն եւ դեղի համագործակցություն ձգելու նոր միջոցներ»*:

Այդ համագործակցության հավանական հիմքերից մեկը համարվում է այն ծրագիրը, որը մշակվել է խորհրդային եւ ամերիկյան մասնագետների, այդ թվում եւ Գրիգորի Յավլինսկու կողմից:

Այդ ծրագրի կենսագործման ժամանակին գլխավոր բարդությունն այն է, նշեց Ա. Վլադիսլավլեւը, որ այժմյան տնտեսական մեխանիզմը ԽՍՀՄ-ում *«բացարձակապես հարմար չէ այն իրագործելու»*:

Դրա համար, նրա կարծիքով, Միխայիլ Գորբաչովին անհրաժեշտ է, որպեսզի նա մինչեւ իր այցելությունը սկսեր ստեղծել տնտեսական նոր կառուցվածքներ, որոնք ընդունակ կլինեն լիիրավ եւ բավականին օրերաթիվ իրագործել արեւմտյան կապիտալի ներդրման խոստ ծրագրերը:

Շոշափելով հնարավոր արեւմտյան ներդնողների մտավախությունները՝ կապված ԽՍՀՄ-ում տիրող քաղաքական անկայունության հետ, Ալեքսանդր Վլադիսլավլեւը նշեց, թե ինչպես եվ իրադարձությունները զարգանան, նա լիովին համոզված է, որ արտասահմանյան կապիտալի ներդրման ծրագրերը միշտ կդաստանվեն այս երկրում: Նրա կարծիքով ԽՍՀՄ բոլոր քաղաքական տեսակետների ներկայացուցիչներին անհրաժեշտ է արտահայտվել այս առիթով եւ վերացնել արեւմտյան գործընկերների անհանգստությունը: ■

Մոլդովայի խորհրդարանի նախագահը մեղադրում է Կենտրոնին հանրաքեության ինքնիշխանությունը դայթեցնելու ջորձերի մեջ

Մոլդովայի խորհրդարանի նախագահ Ալեքսանդր Մոշանուն հայտարարեց, թե *«Կենտրոնը փորձում է ստիպել Մոլդովային ստորագրել Միութենական դայմանագիրը անջատողականների ձեռքով, որոնք ձգտում են ստեղծել կամ դեպական նոր կազմավորում, կամ էլ Ֆեդերալացնել հանրաքեությունը»*: Նա ելույթ ունեցավ ուրբաթ օրը, հունիսի 21-ին Քիշնեւում կայացած հանդիսավոր նիստում, որը նվիրված էր անկախության հռչակագրի ընդունման տարելիցին (հունիսի 23, 1990 թ.):

Ըստ Ալ. Մոշանուի, *«հանրաքեության անկախության հռչակագիրը Մոլդովայի դեպականության բնական դայմանն է եւ ապահովում է նրա օրենքների գերակայությունը միութենականների նկատմամբ»*:

Նա անհիմն համարեց Միութենական դայմանագրի կողմնակիցների փաստարկները, որոնք դնդում են, թե Մոլդովան մեկուսացման մեջ կսնանկանա:

Խոսելով Ռումինիայի հետ հարաբերությունների մասին, Մոլդովայի խորհրդարանի նախագահը հաստատեց հանրաքեության ղեկավարության եւ խորհրդարանի համախոհությունը մեկ լեզվով խոսող երկու ինքնիշխան հանրաքեությունների կոնցեդցիայի վերաբերյալ:

Ալ. Մոշանուն նշեց, որ *«Մոլդովայի եւ Ռումինիայի միավորման մասին խոսակցություններն առկա են անջատողական շրջանակներում եւ առիթ են տալիս հասարակական-քաղաքական իրավիճակն աղակայունացնելու համար»*:

Ալ. Մոշանուի կարծիքով, արտասահմանյան կապերի ոչ բավարար զարգացման դաստառով Մոլդովան ռեալ օգուտ է ստանում համագործակցելով միութենական հանրաքեությունների հետ, *«եւ դա անհրաժեշտ է հաշվի առնել ինչպես էկոնոմիկայի, այնպես էլ քաղաքականության տեսակետից»*: ■

Զվիադ Գամսախուրդիան հույս ունի «խորհրդատվական» երկխոսություն ունենալ Միխայիլ Գորբաչովի հետ

Դրա մասին Զ. Գամսախուրդիան հայտարարեց հունգարացի լրագրողների հետ զրույցի ժամանակ, երբ նրանք հետաքրքրվեցին, թե ինչ կարծիքի է նա խորհրդա-ամերիկյան գագաթի հանդիպման վերաբերյալ:

«Ուժային ճնշման քաղաքականությունը դեմոկրատական վերափոխումների եւ դեպականության ֆեդերալացման ուղին ընտրած հանրաքեությունների նկատմամբ հնարավոր չէ»,- նշեց Զ. Գամսախուրդիան: Սակայն, հաղորդեց Վրաստանի դրեզիդենտը, ինքը տեղեկություններ ունի, որ ԽՍՀՄ Ռեսդդանն այժմ դատրաստում է առաջարկություններ մի փաթեթ՝ հանրաքեություններին տնտեսական դատերազմ հայտարարելու նդատակով: *«Հնայած Մ. Գորբաչովի նոր մտածելակերդ ձեռք բերելու դազմաթիվ կոչերին, Ռեսդդանի եւ մի շարք կենտրոնական նախարարությունների ավանդական մտածում են հին ստերեոտիպերով՝ դատժել»*,- հայտարարեց Զ. Գամսախուրդիան: ■

Վարչապետ Պավլովը դահանջում է լրացուցիչ լիազորություններ

Երկիրը ճգնաժամից դուրս բերելու համար ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը առաջարկում է վարչապետ Պավլովի կաբինետին տալ լրացուցիչ լիազորություններ: Այդ առաջարկը տեղ է գտել նաեւ վարչապետի երկուշաբթի օրը ԽՍՀՄ Գերագույն խորհրդում արտասանած ելույթի արդյունքների հիման վրա նախապատրաստված որոշման նախագծում: Որոշումը քննադատում է ոչ միայն միութենական եւ հանրապետական իշխանություններին, այլեւ ԽՍՀՄ դրեզիդենտին եւ նախարարների կաբինետին, այն բանի համար, որ նրանք բավարար չափով չեն աղահովում ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ընդունած ԽՍՀՄ օրենքի կատարումը:

Պավլովը երեքշաբթի օրը հայտարարեց նաեւ, թե իր դահանջած լիազորությունները ամենեւին չեն նշանակում հակամարտություն Նախարարների խորհրդի եւ դրեզիդենտի միջեւ:

Իր հերթին փոխդրեզիդենտ Գեննադի Յանաեւը հայտարարեց, որ դրեզիդենտը դառաջամենին ուղղված վարչապետի դիմումի մեջ ոչ մի քաղաքական ենթատեքստ չի տեսնում: ■

Սկսվում է եւրոդական ընկերակցության մարդասիրական օգնության բաշխումը

Սկսվել է հունիսի 17-ին Մոսկվա հասած «Ընդհանուր շուկայի» անհատույց դարենային օգնության առաջին 100 տոննայի բաշխումը: Մերձմոսկովյան Ռեուտովո քաղաքում կայացած բեռների բացման հանդիսավոր արարողությանը մասնակցեցին Եւրոդական ընկերակցության հանձնաժողովի դեսդան Մայքլ Էմերսոնը, Կարմիր խաչի խորհրդային եւ գերմանական կազմակերդությունների ներկայացուցիչները:

ԽՍՀՄ-ը մինչեւ տարվա վերջ կստանա ավելի քան 100 հազար տոննա միս, չոր կաթ, մանկական սնունդ, մակարոնային արտադրանք:

Մթերքն առաջին հերթին ուղարկվում է 10 ամենակարիքավոր հանրաքեությունների հիվանդանոցներ, մանկատներ, հիշ աղահոված ընտանիքներ, փոխադրումը եւ բաշխումը կկատարվի արեւմտյան ոչ կառավարական կազմակերդությունների անմիջական մասնակցությամբ:

ԽՍՀՄ Կարմիր խաչ եւ Կարմիր մահիկ կազմակերդությունների միության նախագահ Դմիտրի Վենեդիկտովը շնորհակալություն հայտնեց Եւրոդական ընկերակցության երկրների ներկայացուցիչներին օգնություն ցույց տալու համար: ■

Քրդական ինքնավարություն առանց Քերքուկի

Անգլերենով լույս տեսնող *«Քեյհան»* օրաթերթը կիրակնօրյա համարում նշում է, թե հրահրողներն այսօր դավաճանել եւ լքել են նրանց: «Քեյհան»-ի խմբագրականում նշված է. *«Քրդերն այն ժամանակ գտնվում էին մենությունության մեջ, եւ Սադդամի հետ երկխոսություն սկսելուց բացի ուրիշ ելք չէին գտնում: Քուրդ դեկավարներ Մ. Բարզանին եւ Ջ. Թաղաբանին Իրանում հրդերի սդանդը կանխելու համար ժամանակավոր բանակցությունների սեղանին են նստել կենտրոնական իշխանությունների հետ»*:

Նշենք, որ մինչ այդ Թեհրանը հանդես էր գալիս այդ հայտարարությամբ եւ կրկնում այն միտքը, թե Սադդամը խաբում է հրդերին: Իրանական իշխանություններին մտահոգում էր այն հանգամանքը, թե հրդերի հետ լեզու գտնելուց հետո, Սադդամը ավելի մեծ հարված կհասցնի շիաներին:

«Թեհրան թայմզ»-ը շաբաթ օրվա համարում նշեց, որ եթե նույնիսկ Սադդամ Հուսեյնը հրդերի նկատմամբ զիջումներ անի, միեւնույն է, դրանք ժամանակավոր բնույթ են կրելու, եւ դրեզիդենտն առաջին իսկ հնարավորության դեդքում մոռացության է մատնելու իր տված խոստումները: Այնուհետեւ, «Թեհրան թայմզ»-ը, որ արտահայտում է Իրանի արտգործնախարարության տեսակետները, նշում է, թե Սադդամը դեմ է ժողովրդավարությանը, ուստի ՄԱԿ-ը դետք է Իրաքի ժողովրդին փրկելու համար ավելի գործնական քայլերի դիմի: Վերջում «Թեհրան Թայմզ»-ը կոչ է անում Իրաքի բոլոր ընդդիմադիր կուսակցություններին եւ կազմակերդություններին՝ օգտվելով բազմազգ ուժերի հեռացումից, միավորվել եւ տապալել Սադդամի կառավարությունը: Իսկ հրդական դեմոկրատական կուսակցության դեկավար Մ. Բարզանին Թուրքիայում հրատարակվող *«Միլլիյեթ»* թերթի թղթակցին տված հարցազրույցի ժամանակ նշում է, թե հրդական ինքնավարության հարցի քննարկումը դեռեւս շարունակվում է, եւ ավելացնում, որ մնում է միայն ստորագրել համաձայնագիրը: Սակայն Ֆրանսիական լրատվական գործակալությունը նշում է, թե մեծ նշանակություն ունեցող Քերքուկ քաղաքը դուրս է մնում հրդական ինքնավարության սահմաններից: Մեկ այլ հաղորդագրության համաձայն, Քրդստանի հայրենասիրական միության դեկավար Ջ. Թաղաբանին, մյուս քուրդ դեկավարների հետ խորհրդակցելու նդատակով, կիրակի օրն Անկարայից մեկնեց Հյուսիսային Իրաք: Մեկնելուց առաջ Թաղաբանին նշել է, թե ձեռք բերված համաձայնագիրը նախագծային բնույթ ունի, եւ դետք է քննարկվի քուրդ դեկավարների կողմից: Ըստ Թաղաբանիի, կառուցողական հարցն Իրաքում իսկական ժողովրդավարական իշխանության հաստատումն ու սահմանադրության ընդունումն է: Նրա տեսակետով, Քերքուկի ընդգրկումը հրդական ինքնավարության մեջ երկրորդական հարց է: Գ. Ս.

Իրաքյան նավթի 30 տոկոսը՝ վնասուց հատուցում

ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղար Պերես դը Կուելյարի կարգադրությամբ Իրաքը սդիդված կլինի իր նավթային եկամուտների 30 տոկոսը հատկացնել դատերազմական վնասների հատուցմանը:

Հակազդելով այս որոշման, ՄԱԿ-ում Իրաքի ներկայացուցիչ Արդել Ամիր Անբարին «անկարելի» գտավ սահմանված տոկոսը, բացատրելով, որ իր երկիրը սդիդված կլինի նավթային եկամուտների մեծ մասը հատկացնել սննդեղենի ներածմանը: Իր հերթին, ամերիկյան ներկայացուցիչն անբավարար նկատեց ՄԱԿ-ի քարտուղարի կողմից սահմանված տոկոսը, հիշեցնելով, որ Վաշինգտոնն առնվազն 50 տոկոս էր նախատեսում դատերազմների չափը:

Այնուհանդերձ, վնասուց հատուցման չափը որոշվեց 30 տոկոս, այն հաշվով, որ 1993 թ. Իրաքի նավթային արտածումները կկազմեն 21 միլիարդ դոլար: Երկիրն իր ներածումների համար վճարելու է նավթային եկամուտների 45 տոկոսը: 22 տոկոս հատկացվելու է արտաքին դարտքերի մարմանը, իսկ մնացյալ 30 տոկոսը՝ որդես վնասուց հատուցում Քուվեյթին եւ շրջանի այն երկրներին, որոնք տուժել են իրաքյան նախահարձակումներից:

Այսուհանդերձ, դեռեւս որոշ չէ, թե երբ է թույլատրվելու Իրաքին իր նավթը միջազգային շուկա արտահանելու: ■

Քուրդ դեկավար Մասուդ Բարզանին

հայտարարեց, թե իրենց հաջողվել է Բաղդադի հետ համաձայնության գալ Իրաքի հյուսիսային շրջաններում քուրդ ազգաբնակչության մեջ հառաջիկա երեք ամիսների ընթացքում ընտրություններ կայացնելու, իսկ մեկ տարվա ընթացքում՝ հանրաքվե անցկացնելու հարցի շուրջ: ■

Իսրայելյան իշխանություններն ազատ արձակեցին 89 դաղեստինցիների,

իբրեւ «բարի կամքի» արտահայտություն՝ իդամական տների առթիվ: Մյուս կողմից, Իսրայելի բանտերից մեկում դաղեստինցի 300 բանտարկյալներ կիրակի օրը սկսեցին հացադուլ անել, բողոքելով իրենց բանտային դայմանների դեմ:

Մի այլ բնագավառում, վարչապետ Իցհակ Շամիրն արգելքներ դրեց երկրում զինվորական օդերաթիռների մասին լրատվության վրա, այն բա[illegible] հետ, երբ բանակի մի քանիսներ անցյալ շաբաթ [illegible] բացահայտել էր, թե որոշ [illegible] ծդտված զինվորներ են ուղարկվում բանակի կողմից դեղի Արաբական [illegible]: ■

Նյութերը՝ Interfax-ի եւ մեր սեփ. թղթակիցների

Azg semi-weekly, 47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 375010
phone: 58-1841, fax: (8-852)56-2941, telex: 243267 SULA SU
Խմբագիր՝ Յ. ԱՎԵՏԻՔԵԱՆ
Editor H. AVEDIKIAN
Դասիչ՝ 69149
©Macintosh համակարգչային շարուածքը ՌԱԱԿ ճանաչ եւ տեղեկատվության կենտրոնի

Մեսութ Յըլմազը Թուրքիայի հանրապետության նոր վարչապետ

Տիկին Սեմրա Օզալը սկսկցում է կառավարության նոր դեկավարին

ԱՆԿԱՐԱ, հունիսի 16-ին կառավարող «Մայր հայրենիք» կուսակցության հերթական 3-րդ համագումարում տեղի ունեցան գլխավոր նախագահի ընտրություններ: Այդ դաշտանում առաջադրվել էին վարչապետ Յըլդըրմ Աքբուլութի, դեսական նախարար Հասան Ջելալ Գյուզելի եւ նախկին արտգործնախարար Մեսութ Յըլմազի թեկնածությունները: Ընտրությունների առաջին փուլում, երբ առաջադրված թեկնածուներից ոչ մեկին չհաջողվեց հավաքել անհրաժեշտ ձայների քանակը, որը 587 էր, Գյուզելը դիմեց ինքնաբացարկի: Իսկ երկրորդ փուլում, արդեն Մեսութ Յըլմազը ստանալով 631 ձայն, ընտրվեց «Մայր հայրենիք» կուսակցության գլխավոր նախագահի դաշտանում: Նա 108 ձայնի տարբերությամբ եւ ինչպես գրում են «Հյուրիյեթ» ու «Թերջուման» թերթերը, Թուրքիայի դրեզիդենտի տիկնոջ՝ Սեմրա Օզալի բացահայտ աջակցությամբ առավելության հասավ Աքբուլութի նկատմամբ, որի օգտին ընդամենը քվեարկել էր համագումարի 523 դատգամավոր:

«Մայր հայրենիք» կուսակցությունը 1983 թվականին հիմնադրվել էր Թուրգուտ Օզալի եւ նրա համախոհների կողմից: Նույն թվականին, [illegible]ելով Թուրքիայում կայացած համընդհանուր ընտրություններում, կուսակցությունն անցել էր իշխանության գլուխ, իսկ նրա գլխավոր նախագահ Օզալը, ինչպես ընդունված է երկրում, ստանձնել էր վարչապետի դաշտանը: 1989 թվականին, երբ Օզալը դարձավ Թուրքիայի դրեզիդենտ, ելնելով գործող սահմանադրությունից, համաձայն որի Թուրքիայի դրեզիդենտը չի կարող անգամ անդամ լինել որեւէ քաղաքական կուսակցության, հրաժարվեց կուսակցության դեկավարի դաշտանից: Այդ դաշտանում Օզալին փոխարինած Յըլդըրմ Աքբուլութը Թուրգուտ Օզալից ստացավ կառավարություն կազմելու դարտականություն:

Հիմա արդեն, երբ Մեսութ Յըլմազը ընտրվել է «Մայր հայրենիք» կուսակցության գլխավոր նախագահ, վարչապետ Յըլդըրմ

Աքբուլութի կառավարությունը հրաժարական տվեց: Նոր կառավարություն կազմելու դարտականությունը դրեզիդենտ Օզալի կողմից հանձնվեց նոր նախագահին: Հունիսի 20-ին Յըլմազը վարչապետի լիազորություններն ստանձնելով Աքբուլութից, ներկայացրեց կաբինետի անդամների ցուցակը: Մեսութ Յըլմազի կառավարությունն այդ ցուցակով կներկայանա Թուրքիայի Ազգային Մեծ ժողովին՝ վստահության քվեի համար:

Մեսութ Յըլմազը ծնվել է 1947 թվականին Սամսունում: Սովորել է Անկարայի համալսարանի քաղաքական գիտելիքների Ֆակուլտետում, ավարտելով այն, 1972-74 թթ. Գերմանիայում Քյոլնի համալսարանի տնտեսական եւ սոցիալական գիտությունների Ֆակուլտետում ստացել է մագիստրոսի գիտական աստիճան: 1975-83 թթ. աշխատել է Ռիմիայի, տեքսիլ եւ տրանսպորտի սեկտորներում, մասնավոր տարբեր Ֆիրմաներում, վարելով դեկավար դաշտոններ: 1983 թվականին Թուրգուտ Օզալի հետ միասին մասնակցել է «Մայր Հայրենիք» կուսակցության հիմնադրման աշխատանքներին: Նույն թվականին, Թուրքիայում անցկացված ընտրություններում, Մեսութ Յըլմազը Ռիզեից ընտրվել է մեջլիսի դատգամավոր: Ընտրություններից հետո Օզալի կազմավորված կաբինետում նշանակվել է դետական նախարար եւ ստանձնել դետական խոսնակի դերը: 1986 թվականին նա վարել է մշակույթի եւ տուրիզմի նախագահի դաշտոնը: Իսկ 1987 թվականին դարձել է արտգործնախարար, մնալով այդ դաշտոնում մինչեւ 1990 թիվը: 1989 թվականին Աքբուլութի իշխանության գլուխ գալուց ընդամենը մի քանի ամիս հետո, 1990 թվականի փետրվարի 20-ին, Յըլմազը հրաժարական է տվել: Յըլմազը տիրապետում է անգլերենին եւ գերմաներենին: Ամուսնացած է, ունի 2 երեխա: Թուրքիայում, համենայնդեպս Սամսունում, խոսում են Մեսութ Յըլմազի վրացական ծագման մասին: Ըստ երեւույթին նման խոսակցություններին տեղիք է տալիս այն հանգամանքը, որ նոր վարչապետի ծնողները բնիկ Ռիզեցի են:

Ֆ.Հ.